

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀՆՁԱԿՅԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1888-1915 ԹԹ.)*

Բանալի բառեր – անկախություն, հնչակյաններ, «Հնչակ» թերթ, ազգային և սոցիալական ազատագրություն, ինքնավարություն, Սապահ-Գյուլյան:

Մուտք

19-րդ դ. վերջին տասնամյակներին Օսմանյան կայսրության դժնդակ տիրապետության տակ գտնվող արևմտահայության վիճակի հետագա վատթարացման և Հայկական հարցի միջազգայնացման պայմաններում նոր թափ է ստանում հայ ազգային-ազատագրական պայքարը: 1870-1880-ական թթ. ինչպես Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության այլ տարածքներում, այնպես էլ օսմանյան տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում ստեղծվում են բազմաթիվ ազատագրական կազմակերպություններ ու խմբակներ, որոնք պայքար են ծավալում հայ ժողովրդի ազատագրության համար: Ուշագրավ է, որ դրանց ճնշող մեծամասնությունը իր առջև դրած խնդիրների մեջ առանձնացնում էր արևմտահայության ազատագրության հարցը¹: Ընդ որում, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, գրեթե առանց բացառության, բոլոր կազմակերպությունների ու խմբակների անդամներն Արևմտյան Հայաստանի ազատագրությունը պատկերացնում էին Բեռլինի վեհաժողովում ընդունված 61-րդ հոդվածի տեսքով, ըստ որի՝ օսմանյան կառավարությունը պարտավորվում էր եվրոպական մեծ տերությունների հսկողությամբ Արևմտյան Հայաստանում իրականացնել բարե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 01.08.2022:

¹ Մանրամասն տես **Հովհաննիսյան Ռ.**, Արևմտահայ ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70-80-ական թթ.), Եր., 1965:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺՂ (Ի) տարի, թիվ 3 (79), հուլիս-սեպտեմբեր, 2022

նորոգումներ ու ռեֆորմներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից²:

Բնական է, որ Հայկական հարցի, այն է՝ արևմտահայության ազատագրման խնդրի առկայությունը վարդազունյ հույսերի ու խոստումների հետպատերազմյան մթնոլորտում անխուսափելի էր դարձնելու ավելի արմատական մտայնության ձևավորումը, որ միայն խաղաղ-դիվանագիտական միջոցներով հնարավոր չէ հասնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ու ռեֆորմների իրականացմանը: Այս համոզմունքը փոխանցվեց նաև ազատագրական խմբակների ու կազմակերպությունների հիմքի վրա ստեղծված հայ ազգային կուսակցություններին, որոնք ասպարեզ եկան 1880-ական թթ. կեսերից:

Առաջին հայ ազգային կուսակցությունը ստեղծվեց 1885 թ. հայրենի հողում՝ Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում, Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյան) գլխավորությամբ և կոչվեց Արմենական: Կուսակցությունն իր առջև խնդիր դրեց արևմտահայության ազատագրության համար անհաշտ պայքար մղելու օսմանյան իշխանությունների դեմ: Ընդ որում, վերջիններիս կողմից հայության նկատմամբ նոր բռնությունների տեղիք չտալու համար արմենականները դեմ արտահայտվեցին աղմկալի ու անժամանակ գործողություններին: Իրենց նպատակի իրականացման համար նրանք ապավինում էին միայն սեփական ուժերին և չէին կարևորում այլ ազգերի հետ համատեղ պայքարի անհրաժեշտությունը:

Արմենականների մոտեցումներին ծանոթանում ենք գաղտնապահության նկատառումներով ձեռագիր վիճակում պահված նրանց ծրագրի 1894 թ. տարբերակից, որը միայն 1907 թվականին է տպագրվել «Երկրի ձայն» թերթում³: Այդ ծրագրի «Նպատակ» բաժնում կարդում ենք. «Արմենական կազմակերպութանս նպատակն է յեղափոխութամբ Թիւրքիայի հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել, ինքզինք ազատօրէն կառավարելու, որով միայն կարող կը լինի իբրեւ մարդ ապրելու միջոցներ գիտնալ եւ զանոնք գործադրել

2 Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը տես «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», կազմողներ՝ **Զ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան**, Եր., 1972, էջ 128:

3 Տես **Համբարյան Ա.**, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Եր., 1990, էջ 158:

Ժամանակի պահանջմանց համեմատ»⁴: Ինչպես երևում է այս դրույթից, արմենականների ծրագրում Հայաստանի անկախության վերականգնման մասին ուղղակի ու հստակ հիշատակում չկա, բայց միաժամանակ «իբրեւ մարդ ապրելու» համար «ինքզինք ազատօրէն կառավարելու» նպատակադրումը չի բացառում նաև ապագայում այդ ազատությունը պետական անկախությամբ պսակելու հնարավորությունը: Դրա համար, ըստ արմենականների, անհրաժեշտ էր «...ներքին ոյժ գոյացնել, միացնելով իրարու հետ միեւնոյն գաղափարի ծառայող հայ հայրենասէրներ եւ կեդրոնական ուղղութեան ենթարկելով ժողովուրդը արթնցել...., ինքնապաշտպանութեան զգացում արծարծել, զէնք եւ դրամ հայթայթել եւ ընդհանուր շարժման պատրաստել, երբ մանաւանդ արտաքին հանգամանքներն ալ (օտար պետութիւնների եւ շրջակայ ցեղերի տրամադրութիւնները) մեզ նպաստաւոր համարուին»⁵: Դա պատահական չէր, քանի որ արմենականներն առաջին հերթին մտահոգված էին արևմտահայության՝ «Թիւրքիայի հայ ժողովրդեան» ճակատագրով, այն է՝ նրան սպառնացող ֆիզիկական բնաջնջման վտանգի չեզոքացմամբ: Ուստիև նրանք ստիպված էին առժամանակ ձեռնպահ մնալ այնպիսի գերխնդրի առաջադրումից, որպիսին անկախ պետականության վերականգնումն էր՝ միաժամանակ փայփայելով ապագայում սեփական պետությունը կերտելու գաղափարը:

Արմենականների ծրագրում ժամանակի ընթացքում որոշ փոփոխություններ արվեցին, սակայն դրանք բովանդակային բնույթ չունեին⁶: 20-րդ դ. սկզբին Ե. Քյոսեյանի հեղինակած թռուցիկ-շրջաբերականում, որը մաս կազմեց գործող ծրագրին, նշվում էր, որ կազմակերպության նպատակը շարունակում է մնալ Հայկական հարցի լուծումը՝ արևմտահայության ազատագրումը, իսկ սոցիալիստական հասարակություն ստեղծելը ապագայի խնդիր է⁷:

4 «Յուշեր Արմենակ Եկարեանի», Գահիրէ, 1947, էջ 81-82: Հմմտ. «Ռամկավար ազատական կուսակցութիւն. հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր», կազմեց դոկտ. Վաչէ Ղազարեան, Պէյրուս, 1988, էջ 13, **Վարդիվառեան 3.**, Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար ազատական կուսակցութեան, հատ. Ա., Նիւ Ճըրզի, 2015, էջ 91:

5 «Ռամկավար ազատական կուսակցութիւն. հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր», էջ 13:

6 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք առաջին, Եր., 2010, էջ 487:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 488: Տե՛ս նաև **Վարապետյան Ա.**, Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը, «Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914)», Եր., 2003, էջ 18:

1896 թ. հունիսի Վանի հերոսական ինքնապաշտպանությունից հետո, երբ քաղաքից նահանջող հայ ազատամարտիկների զանգվածային ջարդերին զոհ գնացին մեծ թվով արմենական երիտասարդներ, այդ թվում՝ Մկրտիչ Ավետիսյանն ու իր բազմաթիվ կուսակից ընկերները, արմենականների ազդեցությունը զգալիորեն թուլացավ: Նրանց դեռևս խիստ ընդհանրական գաղափարական դրույթները, այդ թվում՝ ապագա հայոց պետականության վերաբերյալ ունեցած աղոտ պատկերացումները, փոխանցվեցին հայ ազգային մյուս կուսակցություններին:

1. Անկախության գաղափարը հնչակյանների առաջին ծրագրային փաստաթղթերում

19-րդ դարավերջի սոցիալիստական շարժումների ակտիվացմանը զուգընթաց՝ հայ հասարակության մեջ, հատկապես՝ Եվրոպայում սովորող ուսանողության շրջանում, տարածում գտան սոցիալիստական (ընկերվարական) գաղափարները: Այդպիսի պայմաններում մի խումբ արևելահայ ուսանողներ (Ավետիս Նազարբեկյան, Մարո Վարդանյան, Գաբրիել Կաֆյան, Ռուբեն Խանազատ և ուրիշներ) 1887 թ. Ժնևում հիմնեցին Հնչակյան կուսակցությունը⁸:

Հնչակյանները տարված էին սոցիալիստական գաղափարներով, սակայն նրանք նույնպես իրենց մոտակա նպատակը համարում էին Արևմտյան Հայաստանի ազատագրումը⁹: «Հնչակ» թերթում 1888 թ. տպագրված նրանց ծրագրում նշվում էր, որ «Թիւրքահայ ժողովրդի դրութիւնն այսօր հայութեան ամենահիւանդոտ կողմն է: Եւ ամբողջ հայութեան պարտականութիւնն է՝ այսօր և եթ թուժել այդ հիւանդութիւնը...»¹⁰: Իսկ սոցիալիզմին հասնելը նրանք համարում էին ապագայի խնդիր: Այդուհանդերձ, ազգային ազատագրության և սոցիալիզմի գաղափարները Հնչակյան կուսակցության ծրագրում հանդես

8 Հնչակյան կուսակցության ստեղծման ճշգրիտ ժամանակի, հիմնադիրների և այլ հանգամանքների մասին նորահայտ նյութերի հիման վրա առաջ քաշված ուշագրավ տեսակետները տես դոկտ. **Աբել քինյ. Մանուկեան**, Հնչակեան կուսակցութեան կազմաւորումը եւ քսան կախաղաններու մասին անորդարձը երոպական մամուլի ու դիւանագիտական թղթակցութեանց մէջ, Եր., 2020:

9 Մի կողմից՝ ազգային ազատագրության խնդիրը կարևորելու արմենականների գաղափարները և մյուս կողմից՝ սոցիալիզմը գովերգելու հնչակյան մտայնությունը ժամանակին դիպուկ բնորոշել է «Արմենիա» թերթը. «...առաջինը ամեն հայու ափին մէջ մէկ մէկ մարդինի հրացան կուզէ տեսնել, երկրորդը ամեն հայու գանկին մէջ «Կարլ Մարքսի» միգամած վարդապետութիւնները կուզէ գետեղել» («Արմենիա», Մարտիլ, 8 փետրուարի 1890, N 49, էջ 1-2):

10 «Հնչակ», ժընեւ, 1888, հոկտեմբեր և նոյեմբեր, N 11 և 12, էջ 5:

էին գալիս փոխկապակցված. դէպի հեռավոր նպատակ՝ սոցիալիզմ տանող ճանապարհին անցնելու էր Արևմտահայաստանում «քաղաքական ազատություն և ազգային անկախություն»¹¹ ձեռք բերելու հանգրվանով:

«Հնչակ» թերթում 1888 թ. տպագրված ծրագրում կարդում ենք. «Մեր համոզումն այն է, որ այդ թշուառ վիճակից ժողովրդին փրկելու և նրան դնելու համար այն ուղիի վրայ, որը նրան միջոց տար դիմելու դէպի սոցիալիստական կազմակերպությունը, դէպ այդ հեռուոր նպատակը, անհրաժեշտ է թիրքաց Հայաստանում ձեռք բերել **ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատություն և ազգային անկախություն** (ընդգծումը մերն է – Ա. Մ.), որոնք և դառնում են մօտակայ նպատակ»¹²:

Հեղափոխական պայքարով արևմտահայությանն ազատագրելուց, այսինքն՝ «քաղաքական ազատությունը» ձեռք բերելուց հետո հնչակյանները պահանջում էին «այդպիսի գործառնաբար շարունակել **ընդհանուր** (ընդգծումը՝ ըստ ծրագրի – Ա. Մ.) հայութեան ազատութեան գործը, ազատել օտարների լծից ռուսահային ու պարսկահային և կազմել այդ երեքից մի դաշնակցական ռամկապետական հանրապետություն, որ համայն հայութեան համար ճանաչելի կրթացէ դիմելու դէպի հեռուոր նպատակը, դէպ իդէալական հասարակական կազմակերպությունը, դէպի սոցիալիստական աշխարհը, դէպ ուր պիտի դիմէ համայն մարդկությունը»¹³:

Հնչակյան ծրագրից վերը բերված քաղվածքները վկայում են կուսակցության երիտասարդ անդամների կրթական բարձր մակարդակի և ժամանակի առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանակների մոտեցումներին քաջատեղյակ լինելու մասին: Նկատի առնելով արևմտահայության օրհասական վիճակը՝ առաջին հերթին կարևորվում էր նրա ազատագրումը, այն է՝ Հայկական հարցի լուծումը: Կուսակցությունը «համարում է իբրև անհրաժեշտություն, կարդում ենք ծրագրում,– որ այսօր հայ յեղափոխական բոլոր ոյժերը պէտք է նուիրուեն բացառապէս թիրքահայ ժողովրդային դատի

11 «Պատմություն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962)», խմբ. Արսէն Կիսուր, հատ. Ա., Պէյրուզ, 1962, էջ 32:

12 «Հնչակ», 1888, հոկտեմբեր և նոյեմբեր, N 11 և 12, էջ 3:

13 Նույն տեղում, էջ 5:

պաշտպանութեան»¹⁴: Նման մոտեցման համար հիմք էին ծառայում այն իրողությունները, որ՝ «1) Հայութեան ամենաստուար մեծամասնութիւնը, այն է՝ երկու երրորդ մասը կազմում են թիրքահայերը և նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է: 2) Հայութեան այդ մեծամասնութեան դատը Բեռլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածի գօրութեամբ արդէն մտած է միջազգային իրաւունքի դրական շրջանը և ճանաչուած է եւրոպական մեծ պետութիւնների կողմից»¹⁵: Սակայն հնչակյանները ոչ միայն չեն բավարարվել Արևմտյան Հայաստանի խնդրով, այլև ձգտել են հասնելու հայ ժողովրդի մյուս երկու՝ «ռուսահայ ու պարսկահայ» հատվածների ազատագրությանը: Ընդ որում, այդ միացյալ՝ «դաշնակցական» (այսինքն՝ դաշնային) պետությունը պետք է լիներ «ռամկապետական», այն է՝ ժողովրդավարական «հանրապետութիւն»:

Հատկանշական է, որ անկախ պետություն ստեղծելու, դեմոկրատական հասարակարգ կառուցելու գաղափարներն այնքան առաջնային են եղել հնչակյանների համար, որ նրանք «Հնչակում» տպագրված կուսակցության ծրագրի տեքստից անմիջապես հետո անհրաժեշտ են համարել յուրահատուկ հետզրոյութուն-ծանոթութեան մեջ մեկ անգամ ևս ընդգծել թուրքական բռնատիրութեան, միապետական կարգերի և իրենց պատկերացրած անկախ հանրապետութեան պայմանների ընդարձակ ու ազատ գործածութեան միակ **գարանտիա** (garantie) կարող է լինել միմիայն **հանրային ժողովրդային կառավարութիւնը** (ընդգծումները՝ ըստ «Հնչակի» – Ա. Մ.), որը հայ ժողովրդի վերաբերութեամբ կարող է իրագործվել միմիայն նրա ազգային անկախութեան գոյութեամբ»¹⁶:

Պատմագիտութեան մեջ կա այն կարծիքը, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումից մինչև հեռավոր նպատակ հասնելու՝ սոցիալիստական հասարակութիւն կառուցելու այս բարդ ծրագիրը կյանքի կոչելու ուղին իրենք՝ հնչակյանները, հստակ չեն պատկերացրել: Սակայն ծրագրի դրոյթների ուշադիր ընթերցումից այլ համոզման ենք

14 Նոյն տեղում:

15 Նոյն տեղում:

16 Նոյն տեղում:

գալիս: Նկատելի է, որ երիտասարդ կուսակցականները թեպետ օգտվել են ժամանակի ռուսական ու եվրոպական սոցիալիստական կուսակցությունների ծրագրային դրույթներից, այնուամենայնիվ փորձել են հաշվի առնել հայ իրականության առանձնահատկությունները, գիտակցել են խնդրի լուծման դժվարությունները, փորձել են հնարավորինս իրատես լինել: Պատահական չէ, որ նրանք ծրագրում հստակ նախանշել են «ռուսահայ ու պարսկահայ» հատվածները ևս օսմանյան լծից ազատագրված Արևմտյան Հայաստանին միավորելուց հետո միացյալ Հայաստանի կառուցման ուղին: Այսպես՝ նրանք իրենց պարտքն են համարել անմիջապես ձեռնամուխ լինել միավորված Հայաստանի իշխանության մարմինների ստեղծմանը ազատ, առանց դասակարգային խտրականության ու գույքային ցենզի, «ընդհանուր և ուղղակի քուէարկութեամբ», ինչի հետևանքով ձևավորվելու էին «Մշտական ժողովրդական ներկայացուցչություն, Օրէնսդիր ժողով, որ կ'ունենայ լիակատար իրաունք ազգային կառավարչական բոլոր հարցերում»¹⁷:

Հնչակյանների ծրագիրը 7 կետերով ներկայացնում էր հայկական պետության կառուցման ուղղությամբ նախատեսվող քայլերը՝ Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը Օրէնսդիր ժողովի նստավայր դարձնելու որոշում, նահանգային և համայնական լայն ինքնավարության ապահովում, հասարակական և պետական կարևոր պաշտոններում նշանակումների ընտրովի պարտադիր կարգի սահմանում, մամուլի, խոսքի և խղճի ազատության, անձի ու գույքի անձեռնմխելիության երաշխավորում, ընդհանուր զինապարտության սահմանում և այլն¹⁸:

Պետական շինարարության գործում խիստ կարևորելով նաև տնտեսության դերը՝ ծրագրի հեղինակներն անդրադառնում էին տնտեսական բարեփոխումների խնդրին, առանց որոնց անհնար էր քաղաքացիների կյանքի բարելավումը: Այդ տեսանկյունից անհրաժեշտ էր նկատվում հարկային ճիշտ քաղաքականությունը, մասնավորապես՝ առաջադիմական հարկի՝ ըստ հնարավորությունների հարկման համակարգի կիրառումը: Պետականաշինության հարցում

17 Սույն տեղում, էջ 3:

18 Տե՛ս նույն տեղում:

հնչակյաններն ընդգծում էին համընդհանուր կրթական իրավունքի ապահովման կարևորությունը¹⁹:

Հավելենք, որ եթե անգամ նման ծրագրի իրագործումը կարող էր բավականին անիրատեսական թվալ, միննույն է, տվյալ ժամանակի համար այն հայ ազգային-քաղաքական մտքի հասունացման որոշակի հանգրվանի արտահայտություն էր: Ինչպես իրավացիորեն նկատել է Հնչակյան կուսակցության պատմության խորագիտակ հետազոտող Եղիկ Ճերեճյանը, «1888-ին հրապարակուած Հնչակեան Կուսակցութեան առաջին ծրագիրով, հայ իրականութեան մէջ առաջին անգամ ըլլալով անկախութեան գաղափարը կը ստանայ ծրագրային բանաձեւում», իսկ 1891 թ. խմբագրված երկրորդ ծրագրում Արևմտահայաստանի անկախության գաղափարը փոխարինվում է ընդհանրապես հայ ժողովրդի անկախության գաղափարով²⁰:

2. Ինքնավարության կենսագործման փորձեր

Պատահական չէ, որ հնչակյանները բաց չթողեցին պատեհ առիթը՝ իրենց հոգեհարազատ ազատության և անկախության գաղափարները յուրովի կյանքի կոչելու համար: 1895 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում կազմակերպված Բաբը Ալիի հայտնի ցույցի ժամանակ առաջ քաշած պահանջների մեջ նրանք կարևորեցին Արևմտահայաստանի նահանգների «ընդարձակ ինքնավարութեան»²¹ ձեռք բերումը:

Հայերի նկատմամբ համիդյան իշխանությունների կողմից իրականացվող զանգվածային կոտորածների օրերին հնչակյանները կռվի թատերաբեմ դարձրին հարյուրամյակներ շարունակ իրենց հարատև պայքարի, անկոտրում կամքի շնորհիվ կիսանկախ կարգավիճակ ունեցող հայկական երկու լեռնահամայնքները. ակտիվ մասնակցություն ունեցան Սասունի 1894 թ. հերոսամարտին, իսկ 1895 թ. հոկտեմբերին ապստամբության դրոշ բարձրացրին Լեռնային Կիլիկիայի նշանավոր Զեյթուն լեռնագավառում²²:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 3-4:

20 Տե՛ս **Ճերեճեան Ե.**, Անկախութեան գաղափարին հովովոյթը ՍԴ Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեան եւ գործունէութեան մէջ, «Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակ», գիտաժողովի նիւթեր, Անթիլիաս, 2021, էջ 381-382:

21 Նույն տեղում, էջ 382:

22 Սասունի 1894 թ. հերոսամարտի և Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբության կազմակերպման գործում հնչակյանների դերակատարության մանրամասները տե՛ս **Հովհաննիսյան Գ.**, Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Եր., 2012, էջ 79-95:

Զեյթունն ըմբոստության վայր ընտրելու պատճառներից մեկն էլ Եվրոպային ավելի մոտ գտնվելու և դրանով մեծ տերությունների ուշադրությանն արժանանալու նպատակն էր: Ապստամբության հաջող ընթացքն ապահովելու համար հնչակյաններն իրենց քայլերը համաձայնեցրին Զեյթունում հայկական ինքնավարության գլխավոր հենարաններ ու խորհրդանիշներ համարվող իշխանական տների, հատկապես՝ Սուրենյանների ու Նորաշխարհյանների (Ենիդյունյան) հետ: Միայն Կարապետ Սուրենյանի և Նազարեթ Նորաշխարհյանի համաձայնությունը ստանալուց հետո նրանք դիմեցին զենքի²³: 1895 թ. հոկտեմբերի 12-ի կեսօրին հնչակյան մի խումբ գործիչներ (Աղասի, Ապահ, Մլեհ և ուրիշներ) համայնքի մեծամեծների մասնակցությամբ ժողով գումարեցին: «Ժողովէն առաջ,- կարդում ենք կուսակցական մամուլում,- երգուեցան «Հնչակ»-ի պաշտօնական երգը, Զեյթունի եւ Սասունի երգերը... ընդհ. միաձայն որոշումով՝ որոշուեցաւ. Մինչեւ վերջին շունչ կռուիլ թշնամի անպիտան թիրք կառավարութեան եւ իր անարդար օրէնքների դէմ, լինել ինքնուրոյն եւ ձեռք բերել ազգային, տնտեսական եւ քաղաքական կատարեալ ազատութիւն...»²⁴:

Այնուհետև նրանք գրավեցին Զեյթունի գորանոցը, ձերբակալեցին ոստիկաններին և շենքի վրա բարձրացրին դրոշներ՝ հայրենասիրական վերտառություններով²⁵: Թուրք զինվորների անձնատվության լուրը ցնծությամբ ընդունվեց զեյթունցիների ու հնչակյան գործիչների կողմից: «Այստեղ անհնար կը լինի պատմել զեյթունցիների ժողովրդային ցնծութիւնը,- այդ օրերին գրում էր «Հնչակը»,- գոհունակութիւնը, զոր արտայայտեցին կուսակցութեանս ներկայացուցչի և գործիչների առաջ: Ժողովուրդը թափոր կազմած՝ դրօշակներով, շարականներ երգելով, նոր երգեր յօրինելով՝ մինչև վանք տարին կուսակցութեանս գործիչները: Այդ բազմութիւնը հազարներ էին, որոնց ամենքի բերանն էր «կեցցէ» և շարական»: Ուշագրավ է, որ իր միտքը հողվածագիրն ավարտում էր հետևյալ խոսքերով. «Այդ բոլորի մանրամասնութիւնները ապագայի պատմաբաններին կը թողունք»²⁶:

Այն, որ ազատության և անկախության գաղափարները հոգեհարազատ էին հնչակյաններին, հստակ երևում է ապստամբության

23 Տե՛ս Աղասի, Զեյթուն եւ իր շրջանակները: Նկարագրութիւն աշխարհագրական, պատմական եւ պատերազմական Ռուբինեան թագաւորութեան անկումէն մինչեւ մեր օրերը, Պէյրութ, 1968, էջ 143-146:

24 «Հնչակ», 1895, 20 դեկտեմբեր, N 23, էջ 187:

25 Տե՛ս Մկրտչյան Լ., Զեյթունի ապստամբութիւնը (1895-1896 թթ.), Եր., 1995, էջ 118:

26 «Հնչակ», 1895, 20 դեկտեմբեր, N 23, էջ 191:

հետևանքով Զեյթունի ինքնուրույնության պահպանման ու ամրապնդման կապակցությամբ կուսակցության պաշտոնաթերթի համարներում տեղ գտած բազմաթիվ մտքերից: 1895 թ. դեկտեմբերի 20-ի համարում կարդում ենք. «...ապստամբության յաղթական դրոշը սկսաւ ծածանվել Զեյթունի ազատ լեռան գագաթին: Եւ լուսեղէն ճառագայթով ազատութեան ու անկախութեան փարոսն ահա մօտ երկու ամիս է, ինչ փայլում է ամբողջ հայութեան գլխի վրայ»²⁷:

Զեյթունի հերոսամարտի մասին ինչպես վերոհիշյալ, այնպես էլ կուսակցական մամուլում տեղ գտած այլ նյութերից հստակ երևում է, որ հնչակյանները հատուկ հպարտությամբ են խոսել պետական գանազան խորհրդանիշների՝ բարձրացված դրոշների, հնչեցված հեղափոխական ու հոգևոր երգերի մասին, իսկ գինական ուժերի մասին խոսելիս բազմիցս գործածել են «Հայկական բանակ» արտահայտությունը: Այսպես. «Հրձուալի էր տեսնել Հայկական բանակի պարն ու խինդը..., ամենքը կարծես հարսանիք կը գնային իրենց ս. դատի և եղբայրների պաշտպանութեան համար»²⁸:

Զինաթափելով թուրքական զորքերին՝ հնչակյան գործիչները հոկտեմբերի 20-ից ձեռնամուխ եղան տեղերում իշխանության մարմինների ստեղծմանը: Նրանք Զեյթուն քաղաքում ձևավորեցին ժամանակավոր հեղափոխական իշխանություն՝ բաղկացած երկու «ժողովներից»: Առաջինը Ընդհանուր ժողովն էր, որը բաղկացած էր 40 անդամից ու փաստորեն դառնում էր օրենսդիր մարմին: Երկրորդը իշխանության գործադիր մարմինն էր՝ Վարչական գործադիր ժողովը, որը կազմված էր 16 անդամից՝ յուրաքանչյուր թաղամասից 4-ական ներկայացուցիչներ: Ստեղծվեց նաև քաղաքային ոստիկանություն²⁹, որն ապստամբության ողջ ընթացքում՝ 1895 թ. հոկտեմբերից մինչև 1896 թ. հունվարի վերջը, կարողացավ օրինակելի կարգուկանոն հաստատել Զեյթունում և շրջակա գյուղերում:

Խորապես գիտակցելով, որ միայն Զեյթունով սահմանափակվելով հնարավոր չէ ցանկալի արդյունքի հասնել, հնչակյանները բազմիցս փորձեր արեցին ապստամբության ալիքը հարևան գավառակ-

27 Նույն տեղում, էջ 185:

28 Նույն տեղում, էջ 187: Մեկ այլ տեղ կարդում ենք. «Հայկական բանակը երբ ճանապարհ ընկաւ դէպի Զեյթուն, գնալով ստուարացաւ» (նույն տեղում, էջ 189):

29 Տե՛ս «Հնչակ», 1895, 31 դեկտեմբեր, N 24, էջ 196:

ներում՝ Հաճնում, Դորթ Յոլում և Կիլիկիայի այլ վայրերում տարածելու համար³⁰:

Այն, որ ապստամբության հաղթանակից հետո հնչակյանները նախապես որոշել էին Ջեյթունում և ամբողջ լեռնագավառում հայկական իշխանություն ստեղծել ու դրա համար առաջնորդվում էին ապագա ազատ Հայաստանի մասին կուսակցության ծրագրում տեղ գտած դրույթով, հստակ երևում է հաճնցի հեղինակ Հակոբ Պողոսյանի հետևյալ խոսքերից. «Մեր հայրենակիցներէն Աղասին (Կարապետ Թուր-Սարգիսեան) իր քանի մը ընկերներովը Ջեյթուն գալով այնտեղի թուրք կառավարութեանը վտարած է եւ Ջեյթունը իր ժողովրդովը վերածած է հայկական կառավարութեան մը **ըստ հնչակեան կուսակցութեան հրահանգին ու ծրագրին** (ընդգծումը մերն է – Ա. Մ.)»³¹:

Շուրջ չորս ամիս օսմանյան կանոնավոր գորքերի դեմ ապստամբների մղած անհավասար մարտերից հետո Ջեյթուն այցելած Հալեպի եվրոպական հյուպատոսների միջնորդությամբ 1896 թ. հունվարի 30-ին ապստամբների և կառավարության միջև կնքվեց հաշտություն: Համաձայնելով լեռնականների հետ ստորագրել պայմանագիր՝ իշխանությունները ստիպված էին, փաստորեն, Ջեյթունի իշխանությունը ձանաչել որպես իրավական սուբյեկտ, մանավանդ որ դրանով ընդունում էին հնչակյանների առաջադրած 16 պայմանները՝ ներում շնորհել ապստամբության մասնակիցներին, եվրոպական դեսպանների երաշխավորությամբ թույլատրել հնչակյան վեց գործիչներին անարգել հեռանալ երկրից, Ջեյթունում նշանակել քրիստոնյա կառավարիչ՝ մեծ տերությունների հովանավորությամբ, տեղի ոստիկաններին ու հարկահավաքներին ընտրել գեյթունցիներից, կյանքի, գույքի, պատվի և կրոնական ազատությունների ապահովում, շրջակա վայրերում ապրող թուրքերի ու չերքեզների զինաթափում, ապստամբության ժամանակ զինանոցից գեյթունցիների ձեռք բերած զենքի հանձնում՝ պայմանով, որ մինչև ապստամբությունն ունեցած զինատեսակները մնան գյուղացիների մոտ և այլն: Կարևոր կետերից մեկն էլ նախատեսում էր. «Օսմանեան բանակը պիտի ձգէ Ջեյթունի գաւառը և հեռանայ. միայն արտաքին յարձակումներու դէմ պահպանու-

30 Տե՛ս Պողոսյան Հ., Ջեյթունի պատմությունը, Եր., «Հայաստան» հրատ., 1969, էջ 361:

31 Պողոսեան Յ., Հաճնցի ընդհանուր պատմություն եւ շրջակայ Գողան տաղի հայ գիւղերը, Լոս Անճելոս, Քալիֆորնիա, 1942, էջ 554-555:

թեան համար պիտի մնայ մի գունդ զինուոր. այդ գունդը որևէ իրաւունք չունի միջամտելու Զէյթունի բոլոր ներքին գործերուն և անոր խաղաղութեան պահպանման»³²:

Անկասկած, այս պահանջները նպատակ ունեին հնարավորինս պահպանելու լեռնագավառի ներքին ինքնուրոյնությունը: Դա ավելի իրատեսական դարձնելու համար հնչակյաններն ու ապստամբության մյուս ղեկավարները փորձել էին գտնել պայմանագրի գործադրման գործուն մեխանիզմներ: Նրանց առաջադրած վերջին երեք կետերի համաձայն՝ հաշտության պայմանների կատարումը դրվելու էր Մարաշում հաստատվելիք եվրոպական հյուպատոսությունների վրա: Հատկանշական է, որ հնչակյաններն այդ կետերի առկայության պայմաններում իսկ համոզված չէին, որ եվրոպացիները կկատարեին իրենց ստանձնած պարտավորությունները: «Բայց արդեօք մեծ պետութիւնները կը կատարե՞ն իրանց այդ ստանձնած պարտականութիւնը, - գրում էր «Հնչակը», - արդեօք նրանք կարո՞ղ կը լինեն գործադրել տալ այդ վերանորոգումները, կ'ունենա՞ն իրանց անմիջական հսկողութիւնը և նախանձախնդիր կը լինեն իրանց այդ իրաւունքի գործադրութեանը, թէ՞ գլուխ կը ծռեն մի հրէշ մարդակերի, մէկ արիւնկզակ խելագարի (նկատի է առնվում սուլթան Համիդը - Ա. Մ.) անվերջ համառութեան առջև»³³:

Ցավոք, հնչակյանները չկարողացան պահպանել կուսակցության միասնականությունը. 1896 թ. հունվարին Լոնդոնում տեղի ունեցած առաջին պատգամավորական ժողովում սկսվեց նրանց պառակտումը: Կուսակցության հիմնադիրները՝ Ավետիս Նազարբեկյանի գլխավորությամբ, շարունակեցին պնդել, որ սոցիալիզմի վերաբերյալ ձևակերպումը ծրագրում անհրաժեշտ է պահպանել: Մյուս թեր՝ ի դեմս գրող, հրապարակախոս Արփիար Արփիարյանի և արևմտահայ այլ գործիչների, համոզված էր, որ սոցիալիզմը Արևմտյան Հայաստանի գյուղացիության համար խորթ գաղափար է, և, բացի այդ, այն ժողովրդին շեղում է օսմանյան բռնատիրության դեմ պայքարից: Վերջիններս հեռացան կուսակցությունից և որոշ ժամանակ անց հանդես եկան «Վերակազմյալ հնչակյաններ» ընդհանուր անունով:

32 «Հնչակ», 1896, 13 ապրիլ, N 8, էջ 58:

33 Նոյն տեղում, էջ 58-59:

1896 թ. հունիսի սկզբին թուրքական զորքերի ու քրդական ավազակային ջոկատների դեմ Վանում ծավալված ինքնապաշտպանության ժամանակ դրսևորվեցին ազատ ապրելու արևմտահայության կամքն ու վճռականությունը: Այստեղ ևս հնչակյանները փորձեցին կյանքի կոչել ազատության ու անկախության վերաբերյալ իրենց պատկերացումները: Դեպի Պարսկաստան նահանջի ժամանակ Վանի 1896 թ. ինքնապաշտպանության մասնակիցների նկատմամբ օսմանյան իշխանությունների իրականացրած զանգվածային կոտորածից հետո իր քառասուն զինակիցների հետ Վասպուրական է ժամանում հնչակյան նշանավոր գործիչ Փարամազը (Մատթևոս Սարգսյան): Շուտով իշխանությունները հայտնաբերում և ձերբակալում են Փարամազին ու նրա մի քանի ընկերներին: 1898 թ. օգոստոսի 1-ին դատարանում արտասանած ճառում դրսևորվում է նրա և հնչակյան մյուս հեղափոխականների մոտեցումը հայկական պետականության ապագայի վերաբերյալ: Փարամազը մատնանշում էր, որ օսմանյան պետության մեջ անհնար է ակնկալել իրենց պահանջների կատարումը, ուստի հեղափոխականների խնդիրը պետք է լիներ Հայաստանի ազգաբնակչության բաժանումը օսմանյան պետությունից, բայց քանի որ իրենք ազգայնամուլներ չէին, ուստի ապագա Հայաստանում երաշխավորում էին Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների իրավունքների հարգումը³⁴:

3. Ազգային և սոցիալական ազատագրության խնդիրների հարաբերակցության ընկալումը

1896 թ. երկրորդ կեսին կուսակցության պառակտումից հետո Ա. Նազարբեկյանի կողմնակիցները սկսեցին ավելի քիչ ուշադրություն հատկացնել այնպիսի կենսական խնդրի, որպիսին Արևմտահայաստանի անկախության վերականգնումն էր: Հնչակյան կուսակցության պատմությանը քաջատեղյակ պատմաբան Գ. Հովհաննիսյանն իրավացիորեն նկատել է, որ «Արևմտահայ հնչակյաններից ձերբազատված Նազարբեկն ու հնչակյան հին կենտրոնն է՛լ ավելի ընդգծեց իր սոցիալիստական ուղղվածությունը: Նկատելի էր դառնում կուսակ-

34 Տե՛ս Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից (1850-1900), Եր., Հայկ. ՍՍՀ հրատ., 1988, էջ 290-291:

ցության գործունեությունը Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան տեղափոխելու միտումը»³⁵: Պատահական չէ, որ 1897 թվականին կուսակցության ծրագրում կատարված մասնակի փոփոխության մեջ նախ խոսվում էր ռուսական ինքնակալության տապալման, սոցիալիզմին հասնելու անհրաժեշտության, ապա նոր՝ արևմտահայության ազատագրության մասին:

Այնուամենայնիվ, այդուհետև ևս անկախության գաղափարը շարունակեց մնալ հնչակյանների ծրագրային փաստաթղթերում արտացոլված ամենակարևոր և ուշագրավ դրույթներից մեկը: Նազարբեկյանին քննադատողները 1896 թ. օգոստոսի 8-ին հրավիրած իրենց պատգամավորական ժողովում մերժեցին առանձին ցույցեր, մասամբ զինված ելույթներ կազմակերպելու գործելակերպը և որոշեցին անաղմուկ նախապատրաստվել ընդհանուր ապստամբության:

Հատկանշական է, որ համիդյան ջարդերի տարիներին՝ 1894-1896 թթ., օրեցօր ավելի ու ավելի լայն քաղաքական շրջանակներ ու հասարակական զանգվածներ հակվեցին դեպի ազատ ու ինքնիշխան հայրենիք ունենալու ձգտումը: Հետագա տարիներին ևս բազմաթիվ հնչակյաններ շարունակեցին մնալ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի անկախ պետություններ ստեղծելու գաղափարի կրողները: Ուստի նրանց քննադատության թիրախ էին դառնում այն ուժերը, որոնք կողմնակից էին կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանն ու վերջինիս կազմում ինքնավարություն ունենալուն: «Օսմանեան կայսրութեան ամբողջութեան պահպանման մասին եղած համերգն, ի վերջոյ,- համոզված գրում էին հնչակյանները,- դառնում է մի տխուր ջեզուիտութիւն՝ ծնունդ տվող բոլոր աղէտների: Ամեն տարակոյսից դուրս է այն, որ ամբողջութեան պահպանումն այսուհետև մէկ աններելի ցնորք է: Մէկ օրգանիզմ (կազմութիւն), որ այլ ևս փտած է և կարող չէ կենդանանալու, վերածնուելու, նա դատապարտուած է մահուան»³⁶:

Անկախության գաղափարին հավատարիմ հնչակյան գործիչները քաջ գիտակցում էին, որ հատկապես համիդյան ջարդերից հետո հուսահատ հայ ժողովրդի լայն զանգվածների համար ըմբռնելի չէր

35 Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), էջ 123:

36 «Հնչակ», 1897, 5 ապրիլ, N 4, էջ 26:

ինքնուրույն պետականություն ունենալու տեսլականը: Այնուամենայնիվ, նրանք շարունակում էին հորդորել ժողովրդին՝ հույսը դնելով սեփական ուժերի վրա, զինված պայքարի ճանապարհով հասնելու ազատության ու անկախության:

Համիդյան կոտորածների ընթացքում և դրանցից հետո Հայկական հարցում մեծ տերությունների վարած երկդիմի քաղաքականությունը խոր հիասթափություն առաջ բերեց հայության շրջանում: Հնչակյանները դժգոհ էին հատկապես Ռուսաստանից, որի հետ մինչ այդ ավելի մեծ հույսեր էին կապում: Նրանք կարծում էին, որ Ռուսական կայսրությունը ևս հայերին օգտագործում է օսմանյան տերությունից զիջումներ կորզելու նպատակով և դեմ է ինչպես անկախ, այնպես էլ ինքնավար Հայաստանի ստեղծմանը: «Հնչակի» 1900 թ. հունիսի 25-ի համարը խստորեն քննադատում էր ռուսական իշխանություններին. «...եթէ ռուս կառավարութիւնը մի փոքր աւելի լայն, աւելի մարդասիրական, աւելի ազատական գաղափարներով ներշնչուած լինէր իւր արտաքին քաղաքականութեան մէջ, ապա նրա համար մի ինքնավար, ազատ, նոյն իսկ անկախ Հայաստան ո՛չ թէ սպառնալիքի «միջուկ», այլ անհրաժեշտ իսկ է: Հայկական անկախութիւնը Ռուսի ասիական ծրագրի գործադրութեանը ո՛չ թէ խոչընդոտ, այլ թանկագին գօրավիզ կարող էր լինել: Բայց Ռուսի մտածմունքը այդ չէ...»³⁷: Սակայն անգամ Ռուսաստանի նման վերաբերմունքը չփոխեց հնչակյանների համոզմունքն ազատության և անկախության հասնելու խնդրում: Նրանք հավատացած էին, որ «այսօր ազատութեան, անկախութեան նոյն այդ ոգին է սաւառնում և մեր՝ հայկական օդում: Ծնած հայ կեանքից, նա մի օր մարմին կառնէ, կբարձրանայ անշուշտ և այն ժամանակ ներկայիս թշուառութիւնները, ժամանակիս տառապանքները, տխուր անցեալի մտապատկերներ կմնան»³⁸:

Հնչակյան գործիչները հայ ժողովրդի մեջ ազատության և անկախության գաղափարներն ամրապնդելու, սեփական պետականության համար պայքարի հաջողության հանդեպ հավատ ներշնչելու նպատակով անընդհատ բերում էին այլ ժողովուրդների օրինակներ: Նշանավոր հնչակյան գործիչ Ստեփան Սապահ-Գյուլյանը հիշեցնում

37 «Հնչակ», 1900, 25 յունիս, N 4, էջ 45: Հայկական հարցի առնչությամբ Ռուսաստանի վարած քաղաքականության մասին հնչակյանների գնահատականները Տե՛ս Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), էջ 105-108:

38 «Հնչակ», 1900, 1 մարտ, N 1, էջ 18:

էր, որ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շուտափույթ հրավիրել «Հայ հեղափոխական կոնգրես»՝ բոլոր ազգային-քաղաքական ուժերի մասնակցությամբ, նվիրվել հայրենիքի ազատագրության համընդհանուր պայքարին, որին ձեռնամուխ են եղել բալկանյան ժողովուրդները դեռ 19-րդ դարի սկզբից և ունեցել լուրջ հաջողություններ³⁹:

Հնչակյաններն ուշի ուշով հետևում էին հարաբերականորեն իրենց ինքնիշխանությունը պահպանած հայկական լեռնային համայնքներում ծավալվող գործընթացներին: Այդ տեսանկյունից Ջեթունը և Սասունը նրանց ուշադրության կիզակետում էին: «Ջեթունը դեռ կապրի նահապետական ազնուապետական դրութեամբ, - հպարտորեն գրում էր Հրայր Մարալը, - այնտեղ տակալին գոյութիւն ունին բազմաթիւ գերդաստաններ - ինչպիսի են Ենի-Տունեանների, Սուրէնեանների և այլ գերդաստաններ- որոնցից իւրաքանչիւրը բաղկանում է 50-60 տներից և մօտաւորապէս 120-150 կտրիճ և զէնք գործածող երիտասարդներից»⁴⁰: Այնուհետև հողվածագիրը նկատում էր, որ լեռնագավառը նաև տնտեսապես ինքնաբավ համայնքներից մեկն էր, այնտեղ տիրում էր բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, հանգամանքներ, որոնք այնքան անհրաժեշտ էին հայության պայծառ ապագային հասնելու համար:

4. Հնչակյաններ-երիտօրրքեր առաջին առնչությունները

20-րդ դ. սկզբին Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած որոշակի տեղաշարժերն իրենց կնիքը դրեցին հայ ազգային շրջանակների գաղափարական մոտեցումների վրա: Կայսրության բարեփոխման, համիդյան արյունալի վարչակարգի տապալման, բոլոր ազգությունների նկատմամբ խտրականության վերացման ու ժողովրդավարական այլ արժեքների վերաբերյալ «Երիտասարդ թուրքեր» անվամբ հայտնի «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե թերաքքի») կուսակցության կարգախոսները հետաքրքրություն առաջացրին ինչպես հայ, այնպես էլ այլ քաղաքական շրջանակներում: Եվրոպական ազատական արժեք-

39 Տե՛ս նույն տեղում, էջ 18-21:

40 «Հնչակ», 1900, 10 ապրիլ, N 2, էջ 28:

ների մասին այդ կուսակցության գաղափարական մոտեցումներին արձագանքեցին նաև հնչակյանները: Նազարբեկյանի կողմնակիցներից նշանավոր տեսաբան Ստեփան Սապահ-Գյուլյանը «Երիտասարդ Թուրքիա» վերտառությամբ ընդարձակ հոդվածաշարում հանգամանորեն անդրադարձավ երիտթուրքական շարժման նկատմամբ դրսևորելիք վերաբերմունքին: Դժվար չէ նկատել, որ հնչակյանների գաղափարական մոտեցումներում արդեն կատարվել էին որոշակի փոփոխություններ:

«Եթէ «Երիտասարդ թուրքերը» ցանկանում են իրենց հայրենիքի իրական վերածնութիւնը,– կարծում էր Սապահ-Գյուլյանը,– մեր մասնաւոր ցանկութիւնը դրան ներհակ չէ: Եթէ իրենք փափագում են ներքնապէս խաղաղեցնել, ամրապնդել Թիւրքիան, տալ դրան գոյութեան ամուր նեցուկներ – մենք դրան ընդդէմ չենք: ... Մենք դրան ո՛չ միայն հակառակ չենք, այլ մեր շարժումներով, մեր անմիջական ձգտումներով՝ մենք առաջինն ենք բերում ընդհանուր վերաշինութեան անկիւնաքարը մեր Հայրենիքում»⁴¹: Ուստի անկախության փոխարեն՝ «ժողովրդավար ու արդարադատ Թուրքիայում» հայության համար արդեն ընդունելի էր դիտվում ինքնավար կարգավիճակ ունենալու հեռանկարը: Իրենց տերության ամբողջականությունը պահպանելու համաձայնության դիմաց, ըստ Ս. Սապահ-Գյուլյանի, երիտթուրքերը «պէտք է **ձանաչեն, հաշուի առնեն և իրենց պայքարի հիմունքներից մին ընդունեն Հայի արդէն ձեռք բերուած, նոյն իսկ ձանչուած իրաւունքը՝ ինքնավար Հայաստանի գաղափարը** (ընդգծումը մերն է – Ա. Մ.)»⁴²:

1906 թ. հուլիսին «Իթթիհատ»-ի առաջնորդներից Ահմեդ Ռիզայի, Բեհաեդդին Շաքիրի և Նազըմի հետ բանակցությունների օրակարգ ներառված հարցերի մեջ հնչակյանները կարևորեցին Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման և նրա կազմում հայկական ինքնավարության խնդիրները: Տերության փլուզման գաղափարից հրաժարվելու, կայսրության բարեփոխմանը նպաստելու պատրաստակամության դիմաց «Իթթիհատ»-ի առաջնորդները հնչակյաններին խոստացան հարգել արևմտահայության ինքնավարության

41 «Հնչակ», 1901, 10 փետրուար, N 2, էջ 11: Հնչակյանների և երիտթուրքերի հարաբերությունների մասին մանրամասն տես **Հովհաննիսյան Գ.**, Երիտթուրքական շարժումը և հնչակյանները (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), «ՊԲՀ», Եր., 2022, N 1, էջ 107-121:

42 «Հնչակ», 1901, 30 մարտ, N 3, էջ 20: Տե՛ս նաև **Սապահ-Գիլեան Ս.**, Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 76-77:

իրավունքը: Միաժամանակ երիտթուրքերը փորձեցին վիճարկել նաև այդ գաղափարը՝ պատճառաբանելով, որ ինքնավար Հայաստանի սահմաններում կարող են անտեսվել մահմեդական բնակչության իրավունքները: Սակայն հնչակյանները մնացին անդրդվելի և իրենց հերթին խոստումներ տվեցին մահմեդականներին հայերին համահավասար իրավունքներով օժտելու հարցում⁴³:

Ուշագրավ է, որ Օսմանյան կայսրության հովանու ներքո ստեղծվելիք հայկական քաղաքական ինքնավարությունը պետք է ունենար կառավարման խորհրդարանական համակարգ, հայերենը լինելու էր պետական լեզու, իշխանության տեղական ընտրովի մարմիններն օժտվելու էին լայն լիազորություններով: Ինքնավար Հայաստանի սահմանների մեջ ներառվելու էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կիլիկիան, հանգամանք, որն առաջ բերեց երիտթուրքերի բուռն դժգոհությունը: Դրանով երիտթուրքերը «հասկացնում էին հայերին, որ Ինքնավար Հայաստանի գաղափարի քարոզչությունն ավելորդ է, և հրաժարվում էին Հայկական հարցի ճանաչումից»⁴⁴:

Կայսրության ազգություններին հուզող կենսական հարցերում երիտթուրքերի խուսափողական կեցվածքը ստիպում էր շատերին հրաժարվել նրանց հետ համագործակցելուց: Ավելին՝ քանի դեռ իշխանության էր համիդյան արյունալի վարչակազմը, ըստ շատ հնչակյանների՝ անկախ Հայաստանի գաղափարը չպետք է հանվեր օրակարգից: Այդ նպատակին հասնելու համար կուսակցությունը կարևորում էր օսմանյան տերության հպատակ ժողովուրդների, մասնավորապես՝ քրդերի ու ասորիների հետ համատեղ պայքարը⁴⁵:

Մի քանի տարի անց արդեն Ս. Սապահ-Գյուլյանը «Հրատապ խնդիրը» ուշագրավ հոդվածով իր պարտքը համարեց զգուշացնել, որ «Երիտասարդ թուրքերից ոմանք ծայրահեղ ազգայնականներ են, ևսելի քան այն ծերունի թիրքերը՝ որոնք գործել են 16, 17 և 18-րդ դարերում: Օսմանյան կայսրութեան մեջ ապրող բոլոր ժողովուրդներին միատարրութեան վերածելը սրանց սևեռուն գաղափարն է»⁴⁶: Ուստի մի քանի տող ներքև կուսակցության տեսաբանն ավելացնում

43 Տե՛ս Հովհաննիսյան Գ., Երիտթուրքական շարժումը և հնչակյանները (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), էջ 111:

44 Նույն տեղում, էջ 112:

45 Տե՛ս «Հնչակ», 1903, հոկտեմբեր-նոյեմբեր, N 7-8, էջ 47-48:

46 «Հնչակ», 1906, նոյեմբեր, N 11, էջ 106-107:

էր. «...մի հանգամանք մեր աչքից երբէք չպիտի խուսափի,- այն՝ որ թէ հին և թէ նոր թուրքեր, իրենց բոլոր ստորաբաժանումներով միասին բացարձակապէս հակառակ են Հայկական Դատին: Նրանց համար Բեռլինի դաշնադրութեան 61-րդ յօդուած, Մայիս 11-ի ծրագիր, հայկական նահանգների խնդիր, Հայաստան չկայ»⁴⁷:

5. ՄԻ Հնչակյան կուսակցության վերաբերմունքը ռուսական ցարիզմի գաղութային քաղաքականության նկատմամբ:
Ծրագրային վերանայումներ

20-րդ դ. սկզբին, պայմանավորված Ռուսական կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ ազգային ու սոցիալական ճնշումների սաստկացմամբ, ցարիզմի հանդէպ բարյացակամ վերաբերմունքին փոխարինելու եկավ դրա դեմ պայքարի անհրաժեշտության համոզմունքը: Այն հնչակյանների շրջանում հատկապէս սկսեց ամրապնդվել Նիկոլայ II-ի ստորագրած 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակումից հետո, որով նախատեսվում էր Հայ առաքելական եկեղեցու գույքի ու կալվածքների բռնագրավում և, ըստ էության, հայկական դպրոցների փակում: Նման պայմաններում Նազարբեկյանի կողմնակիցները առիթը բաց չէին թողնում սոցիալական պայքարի միջոցով ցարական ինքնակալությանը հարվածներ հասցնելու համար: Նրանք պնդում էին, որ Անդրկովկասում արևելահայերի ելույթները Ռուսական կայսրության դեմ կնշանակեն նաև պայքար օսմանյան բռնակալության դեմ: Հետևաբար հայ հեղափոխականը, ըստ նրանց, «գործելով ցարիզմի դեմ, ... գիտէ, որ միաժամանակ գործում է սուլթանիզմի դեմ,- և այդ հանգամանքը ներկայացնում է թիրքահայ Հնչակեանի գործունէութեան մէկ այլ կողմը, որը ծառայում է դարձեալ թիրքահայ դատի նպատակներին»⁴⁸:

47 Սույն տեղում, էջ 107:

48 «Հնչակ», 1904, յունուար-փետրուար, N 1-2, էջ 1: 1903 թ. ցարական օրենքի դեմ Արևելյան Հայաստանում, մասնավորապէս Ալեքսանդրապոլի գավառում հնչակյանների ծավալած պայքարի մասին տես **Հայրապետյան Ս. Ա.**, Ս.Գ.Հ.Կ. Ալեքսանդրապոլի կառույցը 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ պայքարում, «Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170 ամյակներին նվիրված միջ. գիտ. նյութեր», Եր., 2022, էջ 173-187: Հնչակյանների գործունէության մասին Պարսկաստանում 1905-1911 թթ. տես **Սկրտչյան Կ.**, Հնչակյան կուսակցության մասնակցությունը 1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխությանը իրանահայ գաղթօջախում, «Վերակազմյալ հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170 ամյակներին նվիրված միջ. գիտ. նյութեր», էջ 140-147:

20-րդ դ. սկզբին Ռուսաստանում ծայր առած հեղափոխական շարժումները և հատկապես 1905 թ. ծավալված առաջին հեղափոխությունը հնչակյաններին էլ ավելի մղեցին դեպի սոցիալական պայքարի դաշտ: Վերջիններիս ոգևորությունը հասավ այնտեղ, որ, իրենց համարելով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մի մասը, բոլոր բանվորների՝ պրոլետարիատի շահերի պաշտպաններ, սկսեցին դասակարգային պայքարը վեր դասել արևմտահայ ազատագրական պայքարից: Ավելին՝ բոլոր նրանք, ովքեր շարունակեցին իրենց առաջնային խնդիրը համարել Հայկական հարցը, Նազարբեկյանի խմբի կողմից պիտակավորվեցին որպես պրոլետարիատի թշնամիներ ու նացիոնալիստներ: «Հնչակի» 1904 թ. դեկտեմբերյան համարում «Նացիոնալիստները Կովկասում» խորագիրը կրող հոդվածի հեղինակ Թորոսը, չխորշելով անգամ արևմտահայ ազատամարտի հերոսներից դժգոհելուց, գրում էր. «...սրանից դեռ երկու տարի առաջ, երբ մեր կողմերում բանւորական շարժումները սկսեցին, մեր նացիոնալիստները ամեն կերպ աշխատում էին, դէս ու դէն էին ընկնում, ... տարածելով այն միտքը, թէ Կովկասի շարժումները կարող են չափազանց վնասել «մեր դատին», թէ դրանք կը ջլատեն մեր ոյժերը, իսկ միւս կողմից՝ նրանք առասպելական պատմություններ էին հնարում Սասունի յայտնի հերոս Անդրանիկի մասին ու այդպիսով միամիտ ժողովրդի ամբողջ ուշադրությունը դէպի այն կողմը լարում: Սակայն ոչինչ չօգնեց և բանւորական շարժումները գնալով աւելի մեծ ծաւալ ստացան»⁴⁹:

1905 թ. փետրվարից, երբ սկսվեցին հայ-թաթարական բախումները, հնչակյաններն ակտիվ մասնակցություն ունեցան Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում հայ բնակչության ինքնապաշտպանական կռիվներին: Հատկապես աչքի ընկան Փարամազի, Մելիքի, Քյոսե Սարգսի և այլոց մարտական ջոկատները⁵⁰: Ինչպես երևում է, պայքարը ավանդական խնդրի՝ ընկերային ու ազգային պայքարի առաջնայնության շուրջ ժամանակ առ ժամանակ թեժանում էր: Հնչակյան կուսակցության հիմնադիրները շարունակում էին կարևորել սոցիալիզմը, բանվորական ելույթները, աշխարհի սոցիալ-դեմոկրատիայի հետ համընթաց քայլելը, ցարական հայաստյաց պաշ-

49 «Հնչակ», 1904, դեկտեմբեր, N 12, էջ 107:

50 Տե՛ս **Հովհաննիսյան Գ.**, Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), էջ 148:

տոնյաների ահաբեկումը: Իսկ վերակազմյալ հնչակյանները, հավատարիմ մնալով ազգային ազատագրության գաղափարին, Նազարբեկյան ամուսիններին մեղադրում էին ազգային ուղուց շեղվելու մեջ:

Հնչակյանները շարունակում էին հավատալ ռուսական հեղափոխության հաղթանակի միջոցով իրավահավասար, առանց ազգային ճնշումների՝ ռամկավարական, սոցիալիստական հասարակության կառուցման գաղափարին: Պատահական չէ, որ երբ իշխանությունները համաձայնեցին երկրում օրենսդիր մարմին՝ Պետական դուրմա ստեղծելու պահանջին, հնչակյանները սկզբում ողջունեցին այն և, դա համարելով ժողովրդավարական, իրավահավասար, միասնական պետություն ունենալու երաշխիք, հայտարարեցին, որ այլևս ազատագրական պայքարի միջոցով ազգային պետության ստեղծման անհրաժեշտություն չեն տեսնում: Սակայն կարճ ժամանակ անց, համոզվելով, որ ցարական իշխանությունները նման զիջման են գնացել մարտավարական նպատակներով, հրաժարվեցին դուրմայի գաղափարը պաշտպանելուց և կրկին սուր քննադատությամբ թիրախավորեցին ռուսական ինքնակալությունը:

Հնչակյանների կարծիքով՝ արևմտահայ ազատագրական պայքարը զուտ ազգային պայքար չէ, այլ հավասարապես նաև ընկերային բնույթ ունի. «Թէ Ռուսաստանում և թէ Տաճկա-Հայաստանում Հնչակեանութեան դիրքի մէջ չկայ հակասութիւն,- գրում էր «Հնչակը»,- երկու տեղն էլ նրա գործը սոցիալիստական է...»⁵¹: Նույն միտքը հանդիպում ենք Սապահ-Գյուլյանի հոդվածում. «...սոցիալիզմը ո՛չ միայն Տաճկա-Հայ Դատից անբաժան չպիտի լինի, այլ այդ Դատի լծակը, անկիւնաքարը պիտի հանդիսանայ»⁵²:

Հատկանշական է, որ, արևմտահայ ու արևելահայ հատվածների խնդիրների միջև արհեստականորեն հավասարության նշան դնելով հանդերձ, ամեն առիթով սույն տեսակետի հեղինակները դժգոհում էին, որ արևմտահայությունը քաղաքականապես հասուն չէ սոցիալիզմը խորությամբ ըմբռնելու և դրա համար պայքարելու համար:

51 «Հնչակ», 1906, յունուար-փետրուար, N 1-2, էջ 3:

52 «Հնչակ», 1907, յունուար, N 1, էջ 8: Սոցիալիզմի և Հայկական հարցի համատեղելիության մասին Սապահ-Գյուլյանի «Սոցիալիզմ և Հայկական խնդիր» ընդարձակ հոդվածն ամբողջությամբ տես վերոհիշյալ համարի 3-8-րդ էջերում: Նույն թեմայով տես նաև «Սոցիալիզմ եւ Հայրենիք» գրքի (Փարիզ, 1907) Սապահ-Գյուլյանի առաջաբանը:

20-րդ դ. սկզբին, համարելով, որ հեղափոխական ալիքի մեջ հայտնված Ռուսաստանում սոցիալիզմի գաղափարը կյանքի կոչելու լավ հնարավորություն է ստեղծվել, հնչակյանները իրենց 1907 թ. ծրագրում կատարեցին հերթական հավելումը. «Հնչակեան կուսակցութեան գործունէութեան թատերաբեմն է և՛ Ռուսաստանը»⁵³: Բայց որպէսզի տպավորություն չստեղծվեր, թե իրենք, տարված Ռուսական կայսրությունում հեղափոխության գաղափարներով, մոռացության են մատնել արևմտահայության խնդիրները, կուսակցության կենտրոնական վարչության տարածած հայտարարության մեջ ընդգծվում էր, որ իրենց Կովկասի և Ռուսաստանի մասնաձյուղերը մաս են կազմում միասնական կուսակցական կառույցին և, «համաձայն կուսակցութեանս ծրագրին ու Կազմական ներքին կանոնագրին, աջակցում են Տաճկա-հայ ազատագրութեան գործին՝ Հայկական խնդրին»⁵⁴: Դժվար չէ նկատել, որ, ժամանակի պատմական իրադարձություններին համընթաց, հնչակյանները շարունակաբար փնտրտուքի մեջ էին ազգային և սոցիալական ազատագրության խնդիրներից մեկին կամ մյուսին նախապատվություն տալու հարցում: Անընդհատ հարկ էր լինում զանազան հրապարակումներով հերքել մշտապես երկվության առաջ կանգնած լինելու մասին մեղադրանքները՝ հայությանը խորթ սոցիալիզմը կարևորելու համար: 1907 թ. Սապահ-Գյուլյանն այդ կապակցությամբ հանդես եկավ հատուկ հոդվածով՝ «Կա՞յ երկուորականութիւն (դուալիզմ) մեր դաւանած սկզբունքների մէջ» վերնագրով: «Մեզ ոմանք ասում են, թէ Հնչակեան կուսակցութեան մէջ երկուորութիւն կայ,- գրում էր Սապահ-Գյուլյանը,- քանի որ նա Կովկասում սոցիալիստ է, իսկ Տաճկա-Հայաստանում՝ ազգայնական.- ո՛չ, մենք սոցիալիստներ ենք թէ՛ Տաճկա-Հայաստանում և թէ՛ Կովկասում: Մենք երկու ծրագիր չունենք, այլ մի ծրագիր... Ուրեմն հակասութիւն, երկուորութեան խօսք լինել չի կարող»⁵⁵:

6. Երիտթուրքական հեղաշրջման գնահատականները

Երբ 1907 թ. Փարիզում կայացավ հակասուլթանական ուժերի հայտնի համագումարը, հնչակյանների հրապարակումներում կրկին

53 «Հնչակ», 1907, յունուար, N 1, էջ 8:

54 Սույն տեղում:

55 «Հնչակ», 1907, փետրուար, N 2, էջ 16:

աճեց հետաքրքրությունը արևմտահայության խնդիրների նկատմամբ: Կուսակցության հայտնի տեսաբանները հրատարակեցին մի շարք հոդվածներ, որոնցում տրվում էին գնահատականներ երիտթուրքական շարժման վերաբերյալ, արտահայտվում էր նրանց վերաբերմունքը Արևմտյան Հայաստանում պետականություն վերստեղծելու ծրագրային դրույթի նկատմամբ: Հնչակյանների շրջանում լուրջ կասկածներ էին առաջացնում 1876 թ. Սահմանադրությամբ Թուրքիայի ապագան կառուցելու երիտթուրքերի ձգտումները: «Ի՞նչ է բերում մեզ «Միդհատի սահմանադրությունը»,– շատ դիպուկ նկատում էր Ս. Սապահ-Գյուլյանը,– սահմանադրական ո՛չ մի սկզբունք: Նա վաւերացնում, օրինականացնում, համաժողովրդականացնում է թէև կրատական, դեսպոտական, բռնապետական և անսահման մի կառավարութեան սկզբունքները – այսինքն այն՝ ինչ-որ եղած է և կայ արդէն»⁵⁶: Ուստի նրանք հայությանը չէին տեսնում երիտթուրքերի առաջարկած մեկ պետության մեջ:

«Հնչակի» հաջորդ համարում տպագրած մեկ այլ հոդվածում Սապահ-Գյուլյանը խոր վերլուծության էր ենթարկում իթթիհատականների պատկերացրած ապագա պետության բնույթը: Նա նկատում է՝ քանի որ Օսմանյան կայսրությունը բռնությամբ տեր է դարձել այլ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հայրենիքին, ուստի վերջիններս բոլոր իրավունքներն ունեն անջատողականություն դրսևորելու և սեփական պետություն ստեղծելու համար: Ընդ որում, այդ քայլը ոչ մի կապ չունի ազգայնականության հետ և յուրաքանչյուր ժողովրդի բնական իրավունքն է: Վերլուծաբանը այս դեպքում էլ չի մոռանում հավելել, որ անջատումից հետո ապագա պետությունն իր բնույթով պետք է լիներ սոցիալիստական, որտեղ բացառվելու էր մարդու կողմից մարդու շահագործումը⁵⁷:

Սապահ-Գյուլյանը «Հնչակի» հետագա համարներում տպագրած նորանոր հոդվածներում շարունակեց ներկայացնել իր պատկերացումները Օսմանյան կայսրությունից դուրս, անկախ Արևմտյան Հայաստանի ապագայի վերաբերյալ: «Մեզ համար չկայ ընդհանուր Թիւրքիայի վերանորոգութեան, օսմանեան համապետական խնդիր,–

56 «Հնչակ», 1907, մարտ-ապրիլ, N 3-4, էջ 27:

57 Տե՛ս «Հնչակ», 1907, մայիս, N 5, էջ 43-46:

գրում էր նա,- մեզ համար կայ միայն Հայաստան և Հայկական խնդիր»⁵⁸:

Հատկանշական է, որ արևմտահայ սոցիալիզմի անհրատեսական գաղափարը բնավ չէր խանգարում, որ Ստեփան Սապահ-Գյուլյանն առաջադրեր Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանը անջատելու իրատեսական ծրագիր: Նա «Դաշնութիւն և Թիւրքիա» հոդվածում պնդում էր, որ ճիշտ կլինի՝ ինչպես հայերը, այնպես էլ թուրքահպատակ այլ ժողովուրդներ մինչև լիակատար անջատումն ու անկախացումը կայսրության կազմում ձեռք բերեն անցումային կարգավիճակներ, այն է՝ ինքնավարություն, ապա մաս կազմեն դաշնությանը, այնուհետև՝ համադաշնությանը (կոնֆեդերացիա), ինչը ավելի դյուրին ճանապարհ կհարթեր դեպի անկախություն⁵⁹:

1908 թ. ամռանը երիտթուրքերի՝ իշխանության գալը և միդհատյան սահմանադրությամբ Օսմանյան կայսրության վերածումը սահմանադրական միապետության ամենևին չբավարարեցին հնչակյաններին: Նրանք ճիշտ էին նկատել, որ միապետական, բռնատիրական համակարգը պահպանվում էր, միայն թե երկրի կառավարմանը մասնակից էր դարձել նաև թուրք ազգայնական բուրժուազիան, ուստի ազգությունների լիարժեք զարգացման համար անհրաժեշտ էր ռամկավարական նոր սահմանադրություն: «Որպէսզի Նոր Թիւրքիա լինի և յարատեւուի,- նշում էր Ս. Սապահ-Գյուլյանն իր «Սահմանադրական Թիւրքիա և Հայկական խնդիր» հոդվածում,- հարկաւոր է, որ նրա ստեղծագործութեան մէջ հաւասարապէս մասն ու բաժին ունենան Թիւրքիայի բովանդակուած բոլոր ժողովուրդները և բոլոր դասակարգերը»⁶⁰:

Ինչպես երևում է վերջին քաղվածքից, այնուամենայնիվ, իթթիհատական հեղաշրջման սկզբնաշրջանում հնչակյանները բացառություն չէին, ուստի նրանք ևս հույսեր էին կապում Թուրքիայի լիակատար ժողովրդավարացման հետ: Դրանով պետք է բացատրել Սապահ-Գյուլյանի հետևյալ եզրակացությունը. «Մեր պայքարի մտաւոր նպատակը կլինի Ինքնավարութիւն՝ Հայաստանի, Մակեդոն-

58 «Հնչակ», 1908, յունուար, N 1, էջ 10:

59 «Հնչակ», 1908, ապրիլ-մայիս, N 4-5, էջ 28-39:

60 «Հնչակ», 1908, յունիս-յուլիս, N 6-7, էջ 50:

նիայի և բոլոր բաղկացուցիչ ժողովուրդների համար, իսկ Ռամկավարական սահմանադրություն՝ ամբողջ Թիւրքիայի համար»⁶¹:

Հնչակյան կուսակցության Ամերիկայի մասնաճյուղի ներկայացուցիչները, համոզված լինելով, որ երիտթուրքերի՝ իշխանության գալը դեռ չէր բացառում հայության նկատմամբ հետագա բռնությունների հավանականությունը, կոչ էին անում լինելու զգոն և պատրաստ ցանկացած պահի ինքնապաշտպանության ու պայքարի դիմելու⁶²:

1909 թ. ապրիլին Կիլիկիայում, մասնավորապես Ադանայում տեղի ունեցած հայերի զանգվածային կոտորածները սթափեցրին հայ ազգային գործիչների մեծ մասին: Նոյեմբերի վերջին Կ. Պոլսում Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության հրավիրած 6-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը խիստ քննադատության ենթարկեց ինչպես երիտթուրքերի, այնպես էլ ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը և «որոշեց ամենուրեք, աւելի կորովի թափով, հետևողականորէն և յամառ աշխատանքով շարունակել կռիւր ամէն կարգի շահագործողների դէմ»⁶³: Բայց միաժամանակ հնչակյանությունը կրկին դեմ արտահայտվեց Օսմանյան կայսրության մասնատման, ազգերի անջատման ու սեփական պետության ստեղծման գաղափարին. «Ժողովը,- կարդում ենք որոշման մեջ,- համաձայն սոցիալ-դեմոկրատական սկզբունքների, վերստին շեշտեց անյետաձգելի պէտքը ազգերի համերաշխութեան շուտափոյթ իրականացման, Ժխտելով մի կողմից ՍԵՊԱՐԱՏԻՍՏԱԿԱՆ-ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ գաղափարները և միւս կողմից՝ ՈՒՎԷ ԱԶԳԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻՒՄԻ ՎՐԱՅ (ընդգծումները՝ ըստ տեքստի – Ա. Մ.)»⁶⁴:

Ակնհայտ է, որ որքան էլ կուսակցության ներսում երիտթուրքերի նկատմամբ անվստահությունը մեծ էր, այնուամենայնիվ, պատգամավորական ժողովը, փաստորեն շրջանցելով հեռավոր ապագա-

61 Նույն տեղում: «Հնչակի» հաջորդ համարում Սապահ-Գյուլյանը դարձյալ որոշակի ակնկալիքներ ուներ Թուրքիայի հետագա ժողովրդավարացումից, ուստի գրում էր. «...մենք կ'աշխատենք, որ նա (հին Թուրքիան – Ա. Մ.) շուտով խորտակուի և նրա փլատակների միջից վերաստեղծուի Նոր Թուրքիա, ուր տիրի ոչ միայն ժողովրդային միահեծանությունը քաղաքականապէս, այլև տնտեսապէս» («Հնչակ», 1908, օգոստոս-դեկտեմբեր, N 8-12, էջ 77): Հնչակյաններից պատգամավոր ընտրված Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան) օսմանյան խորհրդարանում բազմիցս հանդես է եկել մեկ պետության կազմում ազգերի ինքնավարություն ապահովելու անհրաժեշտության մասին ելույթներով:

62 Տե՛ս Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն, էջ 196-197:

63 «Հնչակ», 1910, օգոստոս-սեպտեմբեր, N 1-2, էջ 1-3:

64 Նույն տեղում, էջ 2:

յում միացյալ հայկական պետություն ստեղծելու մասին ծրագրային դրույթը, շարունակում էր հավատարիմ մնալ Օսմանյան կայսրության միասնականությունը պահպանելու դիրքորոշմանը և դեռ հույս ուներ հասնելու մեկ կայսրության մեջ իրավահավասար ազգությունների հասարակություն ստեղծելու հեռանկարին: Բանն այն է, որ կուսակցության շարքերում կային մարդիկ, որոնք դեռ միամտորեն կարծում էին, որ 1909 թ. մարտի վերջին և ապրիլի սկզբին Կիլիկիայում տեղի ունեցած հայկական ջարդերի գլխավոր կազմակերպիչները ոչ թե երիտթուրքերն էին, այլ միայն սուլթան Համիդի կողմնակիցները: Դա երևում էր վերոհիշյալ պատգամավորական ժողովի հայտարարության հետևյալ տողերից. «...նորից գլուխ էր բարձրացրել Երլտրզի կամարիլիան (նկատի ունի սուլթանական վարչակազմը – Ա. Մ.)՝ ստեղծելով արիւնոտ մարտ 31-ը»⁶⁵:

«Հնչակ» թերթի շուրջ համախմբված գործիչների մի մասն անգամ ոգևորված պնդում էր, թե Թուրքիան օրեցօր ավելի ու ավելի է ձերբազատվում բռնատիրությունից և ընթանում ժողովուրդների բարեկամության, հավասարության ուղով: Այսպես՝ «Թուրքիայի վերածնության երկու մեծ թշնամիները» հողվածում այն միտքն էր առաջ տարվում, որ հայությունը պետք է ջանքեր չխնայի Թուրքիայի հետագա ժողովրդավարացման համար և պայքար մղի կայսրության երկու թշնամիների՝ «հետաշրջականության», այսինքն՝ համիդյան արյունալի վարչակարգի վերադարձի և «նացիոնալիզմի»՝ ազգայնականության դեմ: «Յետաշրջականութիւն և նացիոնալիզմ, – գրում էր «Հնչակը», – ահա երկու թշնամիներ Թուրքիայի և տևական վերածնությանը, – կռի՛ւ այդ երկու երկրակործան հոսանքների դէմ»⁶⁶:

Եթե սուլթանական վարչակարգի վերադարձի դեմ պայքարը հասկանալի էր, ապա երկրորդ հարցում պարզ չէր, թե ինչու էր անընդունելի ոչ միայն կայսրության տիրապետող ազգության՝ թուրքերի, այլև ազգային փոքրամասնությունների նացիոնալիզմը: Կարծում ենք՝ հնչակյանների նման դիրքորոշումը դարձյալ բխում էր այն մտայնությունից, որ Օսմանյան կայսրության հետագա բարեփոխումն ի վերջո հանգեցնելու էր սոցիալիզմի հաղթանակին, իսկ տերությանը հպատակ ժողովուրդների ազգայնականությունը կարող էր խո-

65 Նույն տեղում, էջ 1:

66 Նույն տեղում, էջ 5:

չընդոտել միասնական պետության ընդհանուր առաջընթացը: Պատահական չէ, որ ինչպես հայ քաղաքական ուժերը՝ հնչակյաններն ու դաշնակցականները, այնպես էլ Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգությունների այլ կուսակցություններ աջակցեցին երիտթուրքերին միապետականների ելույթները ձնշելու գործում: Սակայն ոչ բոլոր հնչակյաններն էին, որ բացարձակ վստահություն ունեին երիտթուրքերի նկատմամբ: Նրանցից շատերը նկատում էին օրեցօր աճող թուրքական ազգայնականությունը, կայսրությունն էթնիկապես միատարր դարձնելու նոր թուրքերի ձգտումները, ուստի առաջարկում էին օրենսդրորեն ամրագրել մեկ ընդհանուր պետության սահմաններում բոլոր ազգերի իրավունքները: Կարևոր է, որ այդպես մտածող հնչակյաններից նույն Սապահ-Գյուլյանը «Ազգային իրաւունքներ և ոչ թէ առանձնաշնորհումներ» հոդվածում առաջարկում էր ունենալ «տիրողի և տիրուողի փոխարաբերութիւնը բնորոշող այն հաստատութիւնը՝ որ կոչւում է «Հայ սահմանադրութիւն»»⁶⁷: Վերջինս լինելու էր հզոր զենք հայության իրավունքները պաշտպանելու համար: Դրանից հրաժարումը, նրա կարծիքով, «ո՛չ միայն պետական մի մեծ սխալ, մի անդարմանելի յանցանք կլինէր, եթէ ոչ ոճիր, այլ մի քայլ ատելի դէպի յետադիմութիւն»⁶⁸:

Վերոհիշյալից հետևում է, որ, բոլոր վերապահումներով հանդերձ, Ա. Նազարբեկյանի, Ս. Սապահ-Գյուլյանի և «Հնչակի» շուրջ համախմբված մյուս գործիչների շրջանում Թուրքիայի բարեփոխման հույսերը չէին մարել: Ավելին, ի տարբերություն ցարական Ռուսաստանի, որտեղ արևելահայության համար նրանք որևէ հեռանկար չէին տեսնում, «բարեփոխվող» Թուրքիայի հետ էին կապում նրա կազմում ինքնավար Հայաստանի տեսլականը: «Նորագոյն Թիւրքիան,- գրում էր «Հնչակը»,- ցարիզմի պատմական ատելութեան մասնաւոր թիրախն է դարձել: Նա ո՛չ մի գնով չի ուզում հաշտուել Թիւրքիայի գոյութեան, ամրապնդման և վերածնութեան գաղափարի հետ»⁶⁹: Անշուշտ, Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի բացասական վերաբերմունքը ոչ այնքան նրա «բարեփոխվելու» խնդրի, որքան հասունացող պատերազմում թշնամական խմբավորմանը՝ Եռյակ (ապա՝ Քառյակ) դաշինքին հարելու հետևանքն էր:

67 «Հնչակ», 1910, հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր, N 3-4-5, էջ 30:

68 Նույն տեղում, էջ 31:

69 «Հնչակ», 1911, յունուար-փետրուար-մարտ, N 1-2-3, էջ 2:

7. Վերադարձ ինքնիշխան Հայաստանի գաղափարին

Երիտթուրքերի իրական մտադրությունների շուրջ կասկածները գնալով խորանում էին ինչպես հայերի, այնպես էլ մյուս ժողովուրդների շրջանում: Արդեն 1911 թ. կեսերին նույն «Հնչակը», մեկդի դնելով կայսրության բարեփոխվելու ակնկալիքները, բաց տեքստով գրում էր. «Աւելի քան երեք տարի է որ «Երիտասարդ Թիւրքիան» բացարձակապէս տիրապետում է: Թուրք նացիօնալիզմը իր թները լայն բացած սաւառնում է. նա ամէն ազատութիւն վայելում է,- ո՛չ մի արգելք իր առաջ»⁷⁰: Ուստի թերթը եզրակացնում էր, որ այդ կուսակցությունն ավարտել է իր պատմական առաքելությունը և պետք է հեռանա ասպարեզից:

Երիտթուրքերի նկատմամբ անվստահության աճն ի վերջո հանգեցրեց նրանց հետ կապերի խզմանը, ինչն ավելի հստակ դրսևորվեց 1912 թ. սկսված բալկանյան պատերազմների օրերին: Պատահական չէ, որ հնչակյանները, խզելով հարաբերությունները երիտթուրքերի հետ, նույն՝ 1912 թ. փետրվարին կայացած խորհրդարանական ընտրություններում հանդես եկան ընդդիմադիր «Իթթիլաֆ» կուսակցության հետ ընտրական դաշինքով⁷¹:

Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը 1912 թ. դեկտեմբերի 25-ին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում սուր քննադատության էին ենթարկվում երիտթուրքերի կեղծ բարեփոխումները, բացահայտվում էին նրանց ազգայնամոլ քաղաքականությունը և «սահմանադրության» սնանկ էությունը, որպես 1909 թ. Կիլիկիայի հայկական ջարդերի հեղինակ մատնանշվում էին իթթիհատականները: Նաև պահանջ էր դրվում կրկին օրակարգ բերելու Հայկական հարցը, պահանջելու եվրոպական տերություններից կատարել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով իրենց ստանձնած պարտավորությունները: Հնչակյաններն այլևս անհնարին էին համարում Թուրքիայի ամբողջականության պահպանումը, քանի որ արդեն անկախության ուղին էին բռնել ինչպես բալկանյան, այնպես էլ ասիական շատ ժողովուրդներ. «Բալկանեան ներկայ պատերազմը յայտնեցաւ թիւրքական տիրապետութեան վախճանի սկիզբը: ... Թիւրքիան

70 «Հնչակ», 1911, ապրիլ-մայիս-յունիս, N 4-5-6, էջ 18:

71 Այդ մասին մանրամասն տես **Ճերճեան Ե.**, Նորայայտ նամակ Փարամազին՝ Սապահ-Գիւլեանէն, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրուք, 2022, 24/1, էջ 596-598:

սկսել է պատառ-պատառ լինել: Այս կրիտիկական ժամին, այս սարսափելի, բեղմնաւոր ու յղի ժամին երևան է գալիս նաև Հայկական խնդիրը, ամենակնճռոտ, դժուար լուծելի»⁷²:

Կարևորելով հնչակյանների վերոհիշյալ դիրքորոշման փոփոխությունը՝ թերթի նույն համարում տպագրած հոդվածում Ա. Նազարբեկյանը կոնկրետ փաստերով ներկայացնում էր իթթիհատական իշխանության ազգայնամոլ նկարագիրը: «Երիտասարդ Թիւրքիան չը ստեղծեց նոր Թիւրքիա,- գրում էր նա,- «նոր» թէժինը, հակառակ իր անուան ու տառին, շարունակում էր ունենալ իբրև հիմք հին թէժիմի բնոյթը և իմաստը: Սահմանադրութիւնը մեռեալ ծնած էր»⁷³: Պատահական չէ, որ կուսակցական մամուլում այդուհետ հաճախակի դարձան կայսրությունից անջատվելու անհրաժեշտության մասին հոդվածները: Բալկանյան պատերազմների ընթացքում հայության հանդեպ Ռուսաստանի որդեգրած նոր քաղաքականությունը հնչակյաններին ստիպեց ոչ միայն դադարեցնել ցարիզմի հասցեին սուր քննադատությունը, այլև Հայկական հարցի լուծման գործում կարևորել նրա դերը: «Հնչակի» հոդվածագիրը «Ռուսիա և Հայկական խնդիր» հոդվածում այն միտքն էր արտահայտում, որ «եթէ Ռուսիան դարձել է համակիր դէպի Տաճկահայ դատը և ցանկանում է նոյն իսկ Ինքնավարութեամբ օժտուած մի բարեկարգուած Հայաստան տեսնել՝ իր հովանաւորութեան տակ, այդտեղ զարմանալու՝ հակաբնական ոչինչ կայ»⁷⁴:

Այսպիսով՝ ՄԻՀԿ-ն նախապատերազմյան շրջանում դադարեցրեց համագործակցությունը թուրքական իշխանությունների հետ, ընդունեց ընդդիմադիր կեցվածք և, հրաժարվելով կայսրության միասնականությունը պահպանելու պարտավորությունից, փաստորեն վերադարձավ Թուրքիայից զատ հայկական ռամկավար ու ինքնավար պետություն ստեղծելու իր երբեմնի գաղափարին: Խիստ քննադատության արժանացավ մանավանդ կայսրության ժողովուրդներին ձուլելու՝ օսմանցի դարձնելու իթթիհատականների ծրագիրը: Կուսակցության որդեգրած այդ քաղաքական ուղեգիծն իր ձևակեր-

72 «Հնչակ», 1913, յունուար, N 1, էջ 1:

73 Նույն տեղում, էջ 4:

74 «Հնչակ», 1913, փետրուար-մարտ, N 3, էջ 9:

պումն ստացավ 1913 թ. սեպտեմբերի 7-ին ռումինական Կոստանցա քաղաքում հրավիրված 7-րդ պատգամավորական ժողովում⁷⁵:

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատի բացվելուց հետո արևմտահայության ազատագրության հույսերը Ռուսաստանի և Անտանտի մյուս երկրների հաղթանակի հետ կապեցին նաև հնչակյանները՝ միաժամանակ չմոռանալով հանդես բերել զգուշավորություն ազգայնամոլ թուրքական իշխանությունների կողմից հայերի հանդեպ արյունալի նոր քայլերի տեղիք չտալու համար⁷⁶: Հայ ժողովրդին ուղղված կոչում նրանք, իրենց էությանը հավատարիմ, պատրաստակամություն հայտնեցին հասնելու ինքնավար Հայաստանի գաղափարի իրականացմանը⁷⁷: Ս. Սապահ-Գյուլյանը 1915 թ. սկզբին հրատարակած «Ինքնավար Հայաստան» գրքույկում հիմնավորեց նաև հայ ժողովրդի՝ անկախ պետություն ունենալու իրավունքը⁷⁸:

Պատերազմի տարիներին Հնչակյան կուսակցությունը հավասարապես կիսեց հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ ցեղասպանությունը: Օսմանյան կառավարության հայաջինջ քաղաքականության կիզակետում հայտնված հայ ազգային գործիչների շարքերում 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազիդ հրապարակում կախաղան բարձրացվեցին 20 հնչակյաններ, որոնց թվում՝ Փարանազը (Մատթեոս Սարգսյան), դոկտոր Պեննեն (Պետրոս Թորոսյան), Արամ Աչքբաշյանը, Ռուբեն Կարապետյանը և ուրիշներ: Հայ ժողովրդի այս պայծառ զավակներին երիտթուրքական իշխանությունները մահապատժի ենթարկեցին «մի անկախ և ինքնավար Հայաստան կազմելու և կայսերական երկիրներից մի մաս անջատելու» ամբաստանությամբ: Այդ եղերական դեպքի կապակցությամբ ՄԴՀԿ-ի տարածած հայտարարության մեջ ասվում էր, որ հնչակյան գործիչ-

75 Տե՛ս **Ճերճեան Ե.**, Անկախութեան գաղափարին հովովոյթը ՍԴ Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեան եւ գործունէութեան մէջ, էջ 384: Ժողովի բանաձևում առկա «ազգերու ազատ ինքնորոշման իրաւունք» եզրույթը, Ե. Ճերճեանի կարծիքով, հայ իրականության մեջ առաջին անգամ է գործածվել (տես նույն տեղում):

76 Հայ հանրությանը երիտթուրքական վտանգի մասին զգուշացնելու նպատակով հնչակյան մամուլը թուրքական թերթերից բազմաթիվ քաղվածքներ տպագրեց Հայկական հարցում, կայսրության ոչ թուրք ժողովուրդների իրավունքների հարգման խնդրում «Իթթիհատ»-ի ազգայնամոլ ու անհանդուրժողական կեցվածքի վերաբերյալ: Օրինակ Գերմանիայում Օսմանյան կայսրության դեսպան Մահմուդ Մուխտար փաշան հայտարարում էր. «Հայկական հարց: Այդպիսի խնդիր չունինք...: Ամէն բան անելու ենք ոյծով մէկ Օսմանեան կայսրութիւն հիմնելու համար» («Հնչակ», 1914, դեկտեմբեր, N 2, էջ 8):

77 Տե՛ս նույն տեղում, էջ 1-3:

78 Տե՛ս **Ճերճեան Ե.**, Անկախութեան գաղափարին հովովոյթը ՍԴ Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեան եւ գործունէութեան մէջ, էջ 385:

ները նահատակվեցին հանուն Հայաստանի անկախության: Նրանց պայքարի հետևանքով պետք է կործանվի չարիքի կայսրություն օսմանյան տերությունը, «և ավերակի վերածած երկրին վրայ պիտի բարձրանայ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ»⁷⁹:

Հայոց մեծ եղեռնից ու հայրենագրկումից հետո հնչակյանները հասկանում էին, որ հայաթափված Արևմտյան Հայաստանում սեփական պետություն ունենալու երազանքն իրատեսական չէ: Ուստի նրանք կարծում էին, որ դաշնակից երկրներից, հատկապես Ռուսաստանից պետք է ակնկալել ինքնավար Հայաստանի գաղափարի իրագործումը: «Երկար ժամանակ հայերը քաղաքականապես բոլորովին անկախ Հայաստան մը երազեցին,- գրում էր կուսակցության մայր պարբերականը:- Այժմ կը թի թէ հասկցեր են այսպիսի երազի մը իրականացման որքան դժար և վտանգաւոր ըլլալը, քանի որ Հայաստանը ամբողջովին անկախ ըլլալով ոչ նիւթական ոյժ և ոչ ալ ելևնտական աղբիւրներ պիտի ունենար իր սահմանագլուխները պաշտպանելու համար»⁸⁰: Ուստի կուսակցությունն արդեն պահանջում էր բավարարվել դաշնակից տերությունների հովանու ներքո ստեղծվելիք ինքնավար Հայաստանով: Այս մոտեցումը չփոխվեց նաև Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո:

Եզրակացություններ

ՍԴՀԿ-ն ջերմորեն ողջունեց 1918 թ. մայիսի վերջին Հայաստանի Հանրապետության հռչակումը: Պարզ է, որ հնչակյանները չէին կարող բաց թողնել իրենց կուսակցական ծրագրում տեղ գտած այդ կարևոր գաղափարը կյանքի կոչելու հնարավորությունը: Նույն տրամաբանությամբ նրանք անկախ Հայաստանի գոյության ընթացքում սատարեցին հանրապետությանը, ջանքեր գործադրեցին Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից ՀՀ ձանաչման ուղղությամբ⁸¹:

Հնչակյան կուսակցությունը, օգտվելով ֆրանսիական զորքերի կողմից Կիլիկիայի ռազմակալումից, որին մեծապես նպաստեց նաև Հայկական լեգեոնը, 1920 թ. փորձեց կենսագործել իր դավանած

79 «Հնչակ», 1915, N 3, էջ 1:

80 Նույն տեղում, էջ 16:

81 Այդ մասին մանրամասն տես **Ճերեճեան Ե.**, Անկախութեան գաղափարին հողովոյթը ՍԴ Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեան եւ գործունէութեան մէջ, էջ 387-392:

ինքնավարության գաղափարը: Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանը մարտին Փարիզում Ֆրանսիայի վարչապետ Միլերանի հետ ունեցած հանդիպման ժամանակ հավաստիացումներ ստացավ, որ հայությունը կարժանանա իրենց աջակցությանը: Ոգևորված Ֆրանսիայի «բարեհաճ» վերաբերմունքից՝ հայ քաղաքական շրջանակները 1920 թ. օգոստոսի 2-ին միահամուռ կերպով հռչակեցին «Ռուբինյան հանրապետությունը»: Հաջորդ օրը համանման հայտարարությամբ հանդես եկան ռամկավարները: Նույն գաղափարը պաշտպանեց նաև ՄԴՀԿ-ն: Երբեմնի հնչակյան նշանավոր գործիչ Միհրան Տամատյանը, հայ ազգային կուսակցությունների հետ համախորհուրդ, Ադանայի Հայոց ազգային խորհրդի անունից օգոստոսի 4-ին Կիլիկիայում Ֆրանսիական ռազմավարչական իշխանությունների ղեկավար, գնդապետ Է. Բրեմոնին հանձնեց Ֆրանսիայի հովանու ներքո Կիլիկիայի հայկական ինքնավար պետության հռչակման մասին հայտարարությունը: Մ. Տամատյանը նաև հայտարարեց Ադանայի նահանգապետարանում իր կազմած կառավարության գործունեության մեկնարկի մասին: Սակայն Ֆրանսիական իշխանությունները ոչ միայն չճանաչեցին հայկական իշխանությունը, այլև դադարեցրին նրա գործունեությունը և հայերի նկատմամբ բռնություններ կիրառեցին⁸²:

Խորհրդային Հայաստանի նկատմամբ հնչակյանների վերաբերմունքը, ինչպես հայտնի է, երբեք թշնամական չեղավ: Նրանք, անկախ քաղաքական վարչակարգից, շարունակեցին Հայկական ԽՍՀ-ն ընկալել իբրև հայրենիք, իսկ կարգավիճակի առումով՝ որպես Խորհրդային Միության կազմում ինքնավար պետական կազմավորում:

Այսպիսով՝ փաստերի շարադրանքից հստակ երևում է, որ եթե հայ ազգային կուսակցություններից արմենականները, մտահոգված առաջին հերթին օսմանյան տիրապետությունից արևմտահայության ազատագրության խնդրով, իրենց ծրագրային փաստաթղթերում խուսափում էին Հայաստանի անկախության վերականգնման բարդ խնդրի արձարծումից, ապա հնչակյանները ոչ միայն չէին խորշում այդ մասին խոսելուց, այլև պատեհ առիթի դեպքում համառ պայքար էին ծավալում և փորձում կենսագործել այդ գաղափարը:

82 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 4, գիրք առաջին, Եր., 2010, էջ 221-223:

Աշոտ Ա. Մելքոնյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրության, Զավախքի, հայ-վրացական և հայ-թուրքական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության, հայոց պետականության պատմության հիմնահարցերը: Ունի շուրջ երկու տասնյակ մենագրություն և ավելի քան 450 հոդված հայոց պատմության առանցքային խնդիրների վերաբերյալ:

Էլ. հասցե՝ ashamelk@yahoo.com

Summary

**THE IDEA OF THE INDEPENDENCE OF ARMENIA
IN THE PROGRAM DOCUMENTS OF THE HNCHAKYANS**
(from 1888 to 1915)

Ashot A. Melkonyan
NAS RA Academician

Key words - statehood, autonomy, the Hnchakyans, "Hnchak" newspaper, Sapakh-Gyulyan.

In the last decades of the 19th century the majority of the Armenian national-political organizations considered the liberation of Western Armenians as their priority within the framework of the Article 61 of the Berlin Congress of 1878. The Hnchakyan party, established in Geneva in 1887, in parallel with the liberation of Western Armenia from the Ottoman yoke, in their program adopted in 1888 set a goal of achieving the freedom of the Armenians living under the rule of Russia and Persia, by creating a single liberal-democratic (Ramkapet) republic.

The analyses of the numerous program documents of the Hnchakyans, and especially the articles published in the "Hnchak" newspaper, as well as the study of the practical steps of the party, testify that the leaders of the party had a thorough understanding of the difficulties regarding the liberation of Western Armenia and achieving the distant goal of creating a socialist society. They perceived the idea of Armenia's autonomy in the context of state independence.

The evasive behavior of the "Young Turks" in issues vital to the peoples of the empire forced many to refuse close cooperation with them. Moreover, while the bloody regime of Sultan Hamid II was in power, according to many Hnchaks, the idea of an independent Armenia should not have been removed from the agenda.

Although the distrust towards the Young Turks was great, the Hnchak party, after 1908 actually bypassed the program provision about creating of a unified Armenian state in the distant future and continued to adhere to the position of preserving the unity of the Ottoman Empire. However, starting from 1912 on the days of the Balkan war, the relations between the Hnchaks and the Young Turks were interrupted.

On June 15, 1915, during the First World War, 20 famous figures from the Hnchakyans party were hanged in Constantinople by the Turkish authorities on charges of intentions to create independent, autonomous Armenia and to alienate part of the imperial lands.

The Hnchak party warmly welcomed the proclamation of the Republic of Armenia at the end of May in 1918. As it is known, the attitude of the Hnchaks towards Soviet Armenia was never hostile. Regardless of the political system, they continued to perceive the Armenian SSR as their homeland, and its status in the Soviet Union as a national-autonomous state entity.

**ИДЕЯ НЕЗАВИСИМОСТИ АРМЕНИИ ПО МАТЕРИАЛАМ
ПРОГРАММНЫХ ДОКУМЕНТОВ ПАРТИИ «ГНЧАКЯН»
(1888-1915 ГГ.)**

Ашот А. Мелконян
Академик НАН РА

Ключевые слова - автономия, гнчакяны, газета «Гнчак», национальное и социальное освобождение, автономия, Сапах-Гюльян.

В последние десятилетия XIX века большинство армянских национально-политических организаций своим приоритетом считало освобождение западных армян на основе 61 статьи Берлинского конгресса 1878 г. Созданная в Женеве в 1887 г. партия «Гнчакян» и принятая ею в 1888 г. программа, перед собой поставила цель параллельно с освобождением Западной Армении от османского ига добиться и свободы для армян, проживающих под властью России и Персии путем создания единой, независимой и демократической («Рамкапетакан») республики.

Анализ многочисленных программных документов гнчакянов и особенно статей, опубликованных в газете «Гнчак», а также изучение материалов о практических шагах партии свидетельствует о полном понимании их руководителями трудностей на пути к освобождению Западной Армении и достижению конечной цели – созданию социалистического общества.

Уклончивое поведение младотурок в вопросах, жизненно важных для народов Османской империи, заставило многих отказаться от тесного сотрудничества с ними. Более того, пока у власти находился кровавый режим султана Гаида II, по мнению многих гнчакянов, идея независимой Армении не могла быть снята с повестки дня.

Несмотря на то, что недоверие к младотуркам было велико, после переворота 1908 г. партия «Гнчакян» фактически в обход программного положения о создании в будущем единого армянского

государства, придерживалась позиции сохранения единства Османской империи. Но начиная с 1912 г., во время Балканских войн, отношения между гнчакянами и младотурками прекратились.

В период Первой мировой войны – 15 июня 1915 г. в Константинополе турецкими властями были повешены 20 известных деятелей партии «Гнчакян» по обвинению в намерении создания независимой Армении и отделения части имперских земель.

Партия «Гнчакян» тепло приветствовала провозглашение Республики Армения в конце мая 1918 г. Как известно, отношение гнчакянов к Советской Армении никогда не было враждебным. Независимо от политического строя они продолжали воспринимать Армянскую ССР как родину, а ее статус в Советском Союзе – как автономное национально-государственное образование.

REFERENCES

1. “Armēnia”, Marsēyl, 8 p'etruari 1890, N 49 **(In Armenian)**.
2. “Hayastanē mijazgayin divanagitut'yan yev sovetakan artak'in k'aghak'akanut'yan p'astat'ght'erum (1828-1923)”, kazmoghnēr` **J. Kirakosyan, R. Sahakyan**, Yer., 1972 **(In Armenian)**.
3. “Hayots' patmut'yun”, hat. 3, girk' arajin, Yer., 2010, hat. 4, girk' arajin, Yer., 2010 **(In Armenian)**.
4. “Hnch'ak”, Zhēnew, 1888, hoktember yev noyember, N 11 yev 12, 1895, 20 dektember, N 23, 1895, 31 dektember, N 24, 1896, 13 april, N 8, 1896, 18 noyember, N 20, 1897, 5 april, N 4, 1900, 25 yunis, N 4, 1900, 1 mart, N 1, 1900, 10 april, N 2, 1901, 10 p'etruar, N 2, 1901, 30 mart, N 3, 1903, hoktember-noyember, N 7-8, 1906, noyember, N 11, 1904, yunuar-p'etruar, N 1-2, 1904, dektember, N 12, 1906, yunuar-p'etruar, N 1-2, 1907, yunuar, N 1, 1907, p'etruar, N 2, 1907, mart-april, N 3-4, 1907, mayis, N 5, 1908, yunuar, N 1, 1908, april-mayis, N 4-5, 1908, yunis-yulis, N 6-7, 1908, ōgostos-dektember, N 8-12, 1910, ōgostos-september, N 1-2, 1910, hoktember-noyember-dektember, N 3-4-5, 1911, yunuar-p'etruar-mart, N 1-2-3, 1911, april-mayis-yunis, N 4-5-6, 1913, yunuar, N 1, 1913, p'etruar-mart, N 3, 1914, dektember, N 2, 1915, N 3 **(In Armenian)**.
5. “Patmut'iwn S. D. Hnch'akean kusakts'ut'ean (1887-1962)”, khmb. **Arsēn Kitur**, hat. A., Pēyruť, 1962 **(In Armenian)**.
6. “Ramkavar azatakan kusakts'ut'iwn. himnakan tsragrer, kanonagrer yew vaweragrer”, kazmets' doct. **Vach'ē Ghazarean**, Pēyruť, 1988 **(In Armenian)**.
7. “Yusher Armenak Yekareani”, Gahirē, 1947 **(In Armenian)**.
8. **Abēl k'hny. Manukean**, Hnch'akean kusakts'ut'ean kazmaworumē..., Yer., 2020 **(In Armenian)**.
9. **Aghasi**, Zēyt'un yew ir shrjanaknerē..., Pēyruť, 1968 **(In Armenian)**.

10. **Chērēchean Ye.**, Ankakhut‘ean gaghap‘arin holovoyt‘ē SD Hnch‘akean kusakts‘ut‘ean gaghap‘arakhōsut‘ean yew gortsunēut‘ean mēj, “Hayastani A. Hanrapetut‘ean 100-ameak”, gitazhoghovi niwt‘er, Ant‘ilias, 2021 **(In Armenian)**.
11. **Chērēchean Ye.**, Norayayt namak P‘aramazin` Sapah-Giwleanēn, “Haykazean hayagitakan handēs”, Pēyrut‘, 2022, 24/1, ēj 591-614 **(In Armenian)**.
12. **Hambaryan A.**, Hay hasarakakan k‘aghak‘akan mitk‘ē arevmtahayut‘yan azatagrut‘yan ughineri masin, Yer., 1990 **(In Armenian)**.
13. **Hayrapetyan A.**, S.D.H.K. Alek‘sandrapoli kaṙuyts‘ē 1903 t‘. hunisi 12-i ōrenk‘i dem payk‘arum, “Verakazmyal hnch‘akyan kusakts‘ut‘yan steghtsman 125 yev Arp‘iar Arp‘iaryani tsndyan 170 amyaknerin nvirvats mij. git. nyut‘er”, Yer., 2022, ēj 173-187 **(In Armenian)**.
14. **Hovhannisyan G.**, Hnch‘akyan kusakts‘ut‘yan patmut‘yun (1887-1915 t‘t.), Yer., 2012 **(In Armenian)**.
15. **Hovhannisyan G.**, Yeritt‘urk‘akan sharzhumē yev hnch‘akyannerē (XIX d. verj – XX d. skizb), “PBH”, Yer., 2022, N 1, ēj 107-121 **(In Armenian)**.
16. **Hovhannisyan R.**, Arevmtahay azatagrakan sharzhummerē yev Karini “Pashtpan hayrenyats” kazmakerput‘yunē (XIX d. 70-80-akan t‘t.), Yer., 1965 **(In Armenian)**.
17. **Karapetyan A.**, Armenakan kusakts‘ut‘yan kazmavorumn u gortsuneut‘yunē, “Hay azgayin yev Hayastani u Andrkovkasi sots‘ialistakan kusakts‘ut‘yunneri patmut‘yan aknarkner (1885-1914)”, Yer., 2003 **(In Armenian)**.
18. **Mkrтч‘yan K.**, Hnch‘akyan kusakts‘ut‘yan masnakts‘ut‘yunē 1905-1911 t‘t. sahmanadrakan heghap‘okhut‘yanē iranahay gaght‘ōjakhum, “Verakazmyal hnch‘akyan kusakts‘ut‘yan steghtsman 125 yev Arp‘iar Arp‘iaryani tsndyan 170 amyaknerin nvirvats mij. git. nyut‘er”, Yer., 2022, ēj 140-147 **(In Armenian)**.
19. **Mkrтч‘yan L.**, Zeyt‘uni apstambut‘yunē (1895-1896 t‘t.), Yer., 1995 **(In Armenian)**.
20. **Pōghosean Y.**, Hachēni ēndhanur patmut‘iwn yew shrjakay Gozan taghi hay giwgherē, Los Anchelēs, K‘alifornia, 1942 **(In Armenian)**.
21. **Poghosyan H.**, Vaspurakani patmut‘yunits‘ (1850-1900), Yer., Hayk. SSH hrat., 1988 **(In Armenian)**.
22. **Poghosyan H.**, Zeyt‘uni patmut‘yunē, Yer., “Hayastan” hrat., 1969 **(In Armenian)**.
23. **Sapah-Giwlean S.**, Sōts‘ializm yev Hayrenik‘, P‘ariz, 1907 **(In Armenian)**.
24. **Sapah-Giwlean S.**, Yeritasard T‘urk‘ia, P‘ariz, 1908 **(In Armenian)**.
25. **Vardivarean Y.**, Mets yerazi chambun ughewornerē yew hamaparp‘ak patmut‘iwn Ramkavar azatakan kusakts‘ut‘ean, hat. A., Niw Chērzi, 2015 **(In Armenian)**.